

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական

52^{րդ} ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 28

12 ՅՈՒԼԻՍ 1903

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթերի տարեկան բաժանորդագինն է Կ. Պոլսոյ համար ֆառսուն դր. եւ գաւառներուն համար յիսուն դր., կանխիկ վնարելի: Աւստահման՝ 12 Թրամկ կամ 5 բուլղի: Թղթատարական ծախքը տարագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ հրապարակ կ'ելլէ ամէն շաբաթ առտու: Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած են, ուե՛ս է իսկոյն իմացնեն տարագրութեան: Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առարկաները նկատողութեան չեն առնուիր:

Սոյն հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշտիկ պայմաններով:

Ձեռ. ԲԷ. ԿԷ. ԾԱԽՈՒԻ ՀԱՏԲ. ԲԱՌՍՈՒՆ. ՓԱՐԱՅԻ

Հասցէ

در علیاده غلطاده (ماسيس) غرضى اداره

ԽԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Հալաքիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

ՏԱՆ ԵՐԱՆՈՒԹԻՈՒՆԸ

զուակներուն աչաց պայծառութիւնով կը կայանայ. երբ անոնց աչքը կը դուռնաւի, մտածմունքի և նեղութեան պատճառ կը լլայ: Եթէ այսպէս տկարացած աղու մը



SCOTT'S EMULSION

տրուի՝ առողջութիւնը չուտ մը կը վերադառնայ և մտածմունքը կը դադրի: Վասնզի Ըսգոթի Բաղադրութիւնը հիւանդութեանց դէմ՝ կը դնէ, և զաղայքը զօրաւոր մտնալու կ'օգտէ և անոնց աչքերը փայլուն և զուարթ կը պահէ. միշտ

ԸՍԳՕԹԻ ԲԵՂԵԳՐՈՒԹԻՈՒՆ

պահելու է. Ասիկայ զՁեզ և Ձեր զուակները զիշեր ու ցոյցաւերէ և յուսահատութիւններէ կը փրկէ: Ուշադիր տեսէ ըլլալ որ շիշը վրան այս նշանով վարդապոյն փաթեթի մէջ է՝ եթէ կ'առնէք:

ԸՍԳՕԹԻ ԲԵՂԵԳՐՈՒԹԻՈՒՆ

փոշիութիւն առած կ'ըլլաք:

Շիշերու վրայ ասոր ուշադրութիւնը ընել պէտք է:

22

Բոլոր քեզիսներէն և քեզիսներէն ինչ ծախէ:

ԱՊԱՌԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ



Եթէ կ'ուզէք ամէն տեսակ գոհարեղէններ ունենալ, աժան ու ճաշակաւոր, թէ՛ արեւելեան եւ թէ՛ եւրոպական ճաշակով պատրաստուած, ժամացոյցներ, արծաթեայ գաւազաններ եւ այլն, դիմեցէ՛ք Պոլիս, Ոսկերչաց Շուկան, Մեծ-փողոց, թիւ 13:

Հարիւրին 20 կանխիկ, մնացեալին համար 100ին 5 շաբաթական վճարում: Կանխիկ գին համար հարիւրին 5 զեղչ: Գործածուած գոհարեղէնները եթէ վնասուած չեն՝ 100ին 10 զեղչով ետ կ'առնուին: Իսկ ապառիկ գընդներէն՝ 100ին 15 զեղչով:

ԱՄՐԱՆ ԱՌԹԻԻ

Կըսեն թէ՛ ամառը որ եւ է սառուցեալ ըմպելի կը զովացնէ, իսկ քիչը կը քրտնցնէ մարդը:

Փորձեցէ՛ք եւ պիտի տեսնէք թէ՛ այդպէս ըսողները կը սխալին:

Գնեցէ՛ք Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ եւ Յ. ԻՍԱ. ԳՈՒԼԵԱՆԻ՝ Չինաստանէն, Հնդկաստանէն, Ճապոնէն եւ Սէյլանէն ուղղակի բերել տուած բարմ, հոսաւեհ եւ առողջարար թէյերէն, համոզուեցէ՛ք մեր ըսածին եւ զովացէ՛ք ա՛մառուան տաք օրերուն:

Միշտ ուշադրութիւն մեր վաճառանիչին:

Կ. Պոլիս, Պահճէ Գափու, ձէլալ պէյ խան, թիւ 10:

Մասնաճիւղեր Թուրքիոյ գլխաւոր քաղաքներուն մէջ.

նոյնպէս Եգիպտոս:



Կ. Պոլսոյ մէջ՝ Մաւթիսի հին թիւերէն դնելու պէտք ունեցողները կրնան դիմել Կա՛մուրջին գլուխը լրագրովաճառ Միսաք աղային:

LA CONFIANCE



ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵԱՆՔԻ ԴԷՍ

Ապահովագրական այս ընկերութիւնը, որ հաստատուած է ու կը գործէ Ֆրանս. կա-
ռավարութեան ֆոնդային ներքեւ, երաշխաւորեալ դրամագումար ունի՝ հրդեհի ճիւղին հա-
մար 56,000,000 ֆր. եւ կեանքի ճիւղին համար 36,000,000 ֆր.:

ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ մէկն է եւրոպայի ամէնէն պատուաւոր եւ ամէնէն վստահելի ապա-
հովագրական մեծ ընկերութիւններէն, եւ ուր որ մասնաճիւղ հաստատուած է՝ միշտ գոհ
ձգած է իր բոլոր յաճախորդները, իր կատարեալ ուղղամտութեամբը եւ կանոնաւոր գոր-
ծառնութիւններով:

Այս վաղեմի ընկերութիւնը մեծ վարկ կը վայելէ ամէն կողմ. եւ իր գործառնութեանց
ու վստահելիութեան վրայ զազաւոր մը տալու համար թուենք մէկ քանին այն հան-
րածանօթ հաստատութիւններէն, որոնք ապահովագրուած են ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍի:

Ֆրանսայի նահանգներու եւ դաւառներու կարգ մը պաշտօնատուներէն զատ, Բարի-
զի՝ Օրէրա, Վօտվիլ, Նուվօթէ, Ամպիկիւ, Ֆօլի-Տրամաթիք եւ այլն թաղանթները, Նաեւ
Պօռտոյի, Թուլուզի, Լիօնի, Մարսիլիայի, Նանդի, Նիսի, Ալճէրիոյ, Բուէնի, եւ
տեղերու մեծ թաղանթները:

Պօն Մարշէն, Լուվրի վաճառատուները, Բիկմալիոնը, Բրէնթանի, Պէլ-Ժառտինիէռի,
Օթէլ տը Վիլի եւ Սամարիթէնի մեծ վաճառանոցները:

Թրանսաթլանթիք, Հալլը-Մարսիլիա նաւարկութեան, Ծովային Փոխադրութեանց,
Ֆրանսական Թրամուէյներու, խնայողական երկաթուղիի ընկերութիւններ:

Մասնաւորապէս ուշադրութեան առնուելիք պարագայ մըն է որ ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ ընկե-
րութիւնը, իր կազմական կանոնադրին համաձայն, պարտաւոր է ամէն վեց ամիսը անգամ
մը իր ելմտական կացութիւնը ենթարկել Ֆրանսայի Առեւտրական նախարարութեան քնն-
նութեանը. նոյնպէս Անի քաղաքապետութեան, Բարիզի Առեւտրական Սենեակին եւ այլն:

Ընկերութեան դրամատունն է Քրէտի Լիօնէն:
Այն ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը ստանձնած է՝ մեր հրապարակին վրայ
իր պատուաւորութեամբը ծանօթ

ԳԱՌՆԻԿ ԱՃԱՌԵԱՆ

Որուն պէտք է դիմել՝ թէ՛ հրդեհի եւ թէ՛ կեանքի ճիւղին վերաբերեալ ապահովագ-
րութեանց կամ տեղեկութեանց համար: Գ. Աճառեան կը վարէ նոյնպէս Compagnie
générale d'Assurances Maritimes ծովային ապահովագր. ընկերութեան Պոլսոյ կողմի գոր-
ծակալութիւնը:

Հասցէ.— Պօլիս, Մահմուտ փաշա, Պէոյիւք երկուրդ խան, թիւ 14, Լա Գօնֆիանս ա-
պահովագր. ընկ. Գրասենեակը:

Դառնիկ Աճառեան կը վարէ նաեւ, իր անձնական սեփականութիւնը եղող ան-
բիւրի վաճառատուն մը, Պօլիս, Շուկայ, Մուհաֆազաճըլար, թիւ 46, ուր զաւառներէն
առուածախի յաճախարարութիւններ կ'ընդունուին:



ՌՕՍԻԱ - ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՀՐԻԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈՒԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱՄՔ

1881 մարտ 20ի Կայս. Ուժազույժ արտօնուած

Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ շէնքը:

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի ԿեԱՆՔի վրայ, եւ ՀՐԳԵՀԻ, ՓՈՒԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱՄ. ՆԵՐՈՒ ԴԷՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈԳԵԿԱՌՔՈՎ ԵՒ ՇՈԳԵՆԱՒՈՎ ՈՒՂԵՒՈ. ԲՈՒԹԵԱՆ ԱՐԿԱՄՆԵՐՈՒՆ ԴԷՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ Կոտրուելուն դէմ:

Ընկերութեան զրամագլուխը, ամբողջապէս վճարուած 10,666,667 Ֆրանք

Նրախաւորութեան գումար աւելի քան 137,300,000 »

Ընկերութեան ապահովագրութիւններուն վճարուած դրամագլուխ եւ վնասուց հատուցում 282,000,000 »

1902 տարւոյ մէջ գանձուած ապահովագին եւ տուկոս 54,000,000 »

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազարեան խան, Վոյվոտա, Ղալաթիա, — եւ Ղալաթիոյ Գործակալութեան, Էսկի Կէօ Իրիւք խան, Բարափին վրայ:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՊԱՐՏԻԶԱԿ

Վարժարանիս նպատակն է տալ միջնակարգ, հիմնական կրթութիւն մը, հետեւելով Անգլիական ու Ամերիկեան նոյնօրինակ Հաստատութիւններու (High School) ծրագրին: Նոյն տեսն ալ, սակայն, նկատի ունենալով երկրին պահանջները՝ մասնաւոր խնամք կը տարուի տոհմային ու Պետական լեզուներու եւ գրականութեան, ինչպէս նաեւ ֆրանսերէնի: Ամենէն պզտիկ կարգերէն սկսելով՝ կարգ մը դասեր կ'աւանդուին անգլիերէն լեզուով, որպէս զի բոլոր աշակերտները կանուխէն ընտելանան Անգլիերէնի: Տօրէնը Տօքթ. Չէյպլըրս կ'աւանդէ տոմարակալութեան դասը, որ մասնաւորապէս կը յարմարէ՛ր ընթացաւարտները գործնական կեանքի: Առողջապահութեան դասը կ'աւանդէ վարժարանին բժիշկը որ միանգամայն մոտէն կը հսկէ բոլոր աշակերտներուն առողջութեանը վրայ: Դիտական ճիւղերու դասախօսութիւններն արդիւնաւորելու համար՝ վարժարանը ունի պիտանի ու աւհրաժեյտ գործիքներու ընտիր հաւաքածոյ մը:

Նորակառոյց նպատակաւորմար շէնքը եւ նորաստաց ընդարձակ հողերը՝ ամէն ժամանակէ տեսի նպաստաւոր են աշակերտներու հանգրտութեան եւ առողջութեան, գեղը ըլլալով արդէն հանրածանօթ՝ իր մաքուր ոգովն ու գեղեցիկ տեսարաններովն:

Վարժարանիս վերաբացումը (24րդ տարեշրջան) տեղի պիտի ունենայ Սեպտեմբեր երեքին (Ն. Տ.): Տարեթոյական է 16 օսմ. ոսկի: Աւելի մանրամասն տեղեկութիւններու համար դիմել աւձամբ՝ Պայպրլ-Հատու, Կ. Պոլսոյ, կամ նամակով Տնօրէնութեան, Պարտիզակ:

ՀԱՅՈՒՆԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

ԱՏԱՌԱԶԱՐ

Վարժարանիս նոր տարեշրջանը պիտի սկսի Սեպտ. 9ին. (Ն. Տ.): Չորեքշաբթի Դիչերօթիկներու տարեթոյական է 12 օսմ. ոսկի, որուն կէսը պէտք է վճարել Սեպտ. սկիզբը. միւս կէսը Յունուարի մէջ. Դաշնակի դաս առնողները 3 իսկերգեհօնի դաս առնողները 1½ ոսկի աւելի կը վճարեն:

Կէս տոմսակով, Ատարազարու ու զետեղելու եւ ուրիշ դիւրութեանց համար՝ կարելոր է որ վարժարանին գիչերօթիկ աշակերտուհիները ինչպէս նաեւ յառաջիկայ տարեշրջանին նոյն վարժարանին աշակերտիլ փափաքող օրիորդները, իրենց անունները շրկեն՝ եւ կամ աւձամբ կամ իրենց պաշտպանին միջոցաւ ներկայանան՝ Մր. Ու. Ու. Փիթի. թիւ 5, Ամերիկեան խան Կ. Պոլսոյ մինչեւ Սեպտ. 4, (Ն. Տ.):

Վարժարանին յայտագիրը ու գողներուն ճրի կը ղրկուի Ուրիշ տեղեկութեանց համար գրել Տօքթ. Ս. Լ. Գ. Գալանեանի, Ատենապետ ինձամակալութեան, Ատարազար:

ՄԱՍԻՍ

52^{րդ} ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 28

12 ՅՈՒԼԻՍ 1903

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Արմաւենիներու եկամուտով (համագրական) Տ. Ա. : — ծախսագրային թուանքեր, «Յոյն ուսանողը». ԶԻՖԹԷ-ՍԱՐԱՖ : — Բանաստեղծութիւններ. «Դաւեսերուն մեջ». Մ. ՈՒՂԱՌԻԼԵԱՆ. — «Դարուն». Վ. — «Սիրոյ ուղին». Մ. Կ. ՄԵԾԱՏՈՒՐԵԱՆ : — Նուիրական ուխտասեղիներ. ԳԵՂԱՄ : — Թաւեղանակի մը համար (Իրական պատմութիւն) Յ. Պ. ՄԱՆՈՒԷԼԵԱՆ : — Ինչպիսիք գրականութիւն. «Մաքիլսէ Սեռա». ԱՆԱՐԷԼԼԱ : — համագրական Նօթեր :

ԱՐՄԱԻԵՆԻՆԵՐՈՒ ԵԿԱՄՈՒՏՈՎԸ

Դիտած էք որ Եգիպտահայերը, որոնք իրենց կլիմային բերմունքով՝ ձմեռը աւելի աշխոյժ ու գործօն ըլլալու էին, սովորաբար ամբան հրատապ եղանակին է որ զարկ մը տալ կ'ուզէին իրենց հանրային կեանքին. Առաջնորդարանի գործեր, Բարեգործականի կամ Աղքատախնամի ձեռնարկութիւններ, Թաղականի խնդիր և մանաւանդ քահանայացուի վէճեր, միշտ մայիսէն յուլիս է որ կը ծաղկին, աշխատամուտին մարելու կամ մոռցուելու համար : Այս անգամ, վախ չիկայ դոնէ որ քահանայական ձեռնադրութեան վէճը վերաբարձուի դարձեալ Աղեքսանդրիոյ մէջ, վասն զի ընծայացուն՝ որուն շուրջը այնքան ազմուկ յարուցուեցաւ՝ շուրջը Ամերիկայ աւեր է՝ սարկաւազ վիճակի մէջ, քողք երեսին ամուսնական յարկէն խոյս տուող հարսի մը պէս :

Բայց, վերջին լուրերու նայելով, տարիներէ ի վեր Պոլսոյ թերթերուն Եգիպտահայ Թղթակցութեան բաժինը ընցնող փոքուն խնդիրներէն դերադանդապէս վեր, իրապէս օգտակար հարցով մը կը դադարին այս միջոցին Գաշիբէի աղգայինները, — վարժարանի մը շինութեան խորհուրդով, երբ «Գաշիբէի աղգայինները» կ'ըսուի ընդհանուր առմամբ, կ'ըմբռնէր անշուշտ Եգիպտական ոստանին հայոց այն փոքրաթիւ մասը որ, իր աղքատ

ցիկ դիրքին ու նիւթական անկախ կացութեանը շնորհիւ, վարիչն է առաջնորդական ու դպրոցական գործերուն որոնց վերին հըս կողմէն ընդ ունի : Եւ ատոնք՝ ներշնչուածով մը որ շատ ուշ հասնելուն համար գեղեցիկ ըլլալէ չի դադարիր, փափագ ունեցիր են քաղքին միակ աղգ. վարժարանը փոխադրել օգուէտ ու առողջարար թաղ մը, նորակառոյց շէնքի մը մէջ :

Այս լուրին՝ Եգիպտահայ ծնողքներուն ու դպրոցականներուն մասնաւորապէս պատճառելիք ուրախութիւնը ըմբռնելու համար՝ պէտք է աչքի առջեւ բերել «Գալստեան երկսեռ վարժարան» կոչուած հաստատութիւնը որ շատ չի տարբերիր սա մեր Տօլապօ Տէրէի դպրոցէն, իր հիւսկեամբը ու վատաւոր զիրքովը. միայն թէ անոր կրկին կամ աւելի ընդարձակութիւնը ունի : Եւ արդի շէնք մը, արաբական նեղ թաղի մը մէջ, հին դրութեամբ դաստիարակներով, բոլորովին անհաշտ՝ մանկավարժական նորագոյն պայմաններուն ու պահանջներուն : Իր կառուցման թուականին՝ նախակրթարանի մը պէտքերուն կրնար համապատասխանել, բայց հայ դպրոցին հետզհետէ բաղմանաւ լով Գաշիբէի մէջ, և ուսողական լաւ խումբի մը կազմուելովը, հիմակ ո'չ իսկ ծաղկոյթի կրնայ ծառայել այդ հինցած շէնքը : Գալըս

տեան վարժարանին հիմնադիրը, Վանեցի փր-
ռապան մը կամ հացադործ մը որուն բաղդը
ժպտեր էր, չէ բաւականացեր միայն չէնքը
կառուցանելով, այլ անոր եկնամուտներ ալ ա-
պահովեր է՝ արմաւենիներու անտառ մը կտա-
կելով որ եթէ բանաստեղծներուն հեշտալի
հովանի մը կ'ընծայէ ու մեղամաղձիկ քեր-
թուածներու տուն կու տայ Նեղոսի ափերուն
մօտ, ատկէ աւելի դրական ծառայութիւն
մը կը մատուցանէ իր տարեկան հաստատ ե-
կամուտներով՝ քարուկիր կալուածի մը պէս :
Եւ դպրոց, եկեղեցի, առաջնորդարան, մեծ
մասամբ արմաւենիներուն եկամուտովն է որ
կը մատակարարուին : Ընկերային խոնարհ
ղիրքի տէր այդ գաւառացիէն, հացադործ
Գալուստ աղայէն ետքը, չէ գտնուած մէկը,
տեղացի կամ դաղթական, որ ուղէր աւել-
ցնել այդ բուսական եկամուտները, վերա-
շինել դպրոցը :

Այսօր, կրթական այս մեծ պէտքը լրացը-
նել կը խորհին Գահիրէի հայ ջոջերը, հաւա-
քական կերպով անշուշտ, նոր դպրոցի մը
կառուցումով : Ըշմարտութիւնը անտեսել
պիտի ըլլար՝ չխոստովանելով, այս անթիւ,
թէ այդ ջոջերը, — Կիտանի հայ պաշտօնա-
տարներ, սեղանաւորներ, վաճառականներ,
հասառուներ եւ այլն, — եթէ վարժարանի
վրայ շատ ուշադրութիւն չեն դարձուցած,
ձեռնպահ չեն մնացած սակայն բարեգործա-
կան ձեռնարկներու մէջ՝ որոնք ուղղակի ժո-
ղովուրդին կը վերաբերէին, և իրենց քսակը
միշտ բաց եղած է աղքատներուն ու կարօտ-
եալներուն, — ինչպէս Գահիրէի՝ նոյնպէս Ա-
ղեքանդրիոյ մէջ : Ուշ կամ կանուխ, կարգը
վարժարանին եկաւ : Կը մաղթենք որ ծրագ-
րային վիճակի մէջ չի մնայ յղացուած խոր-
հուրդը և Գահիրէի Հայոց միակ կրթական
հաստատութիւնը իր պահանջմանց համապա-
տասխան ու այդ դաղութիւն պատուարեր
վիճակի մը մէջ գրուի տրգարու :

Տ. Ա.

Արմաշի վոյս-վանահայր Դուրեան Տ. Ն.
ղիչէ եպիսկոպոս մայրաքաղաքս եկած է՝
Դպրեւանքին վերաբերեալ գործերու համար :

ԴԱՇՏԵՐՈՒՆ ՄԷՋ



Ոսկի հասկերն արեւին ճակ կը հրեւոյն,
ձոխ գանձերով առլըցուն հողը սեգ,
Որուն վրայ հակած ինչպէս մայր մ'անցնեց՝
Կը խընամե գայն բազմախոնջ գիւղացին :

Իրիկուան մեղկ բոյրերն անվե՛րջ ծրծելով
Ու թունդ երգի պատառ մը թաւ Երբունքին
Իր վասակին մէջ յաղթական, հրեւուագին,
— Օ՛ գեղջուկի երանութիւնն անխըռով :

Աւխտառքի՛ն հիանալի ու անկեղծ,
Ուր կը պըճեմ մերթ իր հոգին աղամանգ,
Եւ ուր փոխան յուզումներուն սրբաբանգ՝
Մտնուր ձիգի՛ լոկ վարձը կայ, փառայնդ :

Ու կը «սասի» կրճուն բայց մի՛՛ս անվեհեր՝
Մըճակն անվիճոս, իր սուրբ հոյուն անձնա-
տուր,
Բնութեան շեղ ու հեռաւոր անկիւնն ուր
Քաղեցնի գառն հոգեւ բընա՛ւ չեն իջներ :
Մ. ՌԻՆՈՒԲԵԱՆ

ՃԱԿԱՏԱԳՐԱՅԻՆ ՏՈՒՄՆԵՐ

ՅՈՅՆ ՈՒՍԱՆՈՂԸ



Մօնքէլիէ այն խիստ հազուագիւտ քա-
ղաքներէն է որ ամբողջ ձմեռ մը ոչ ամպի
կտոր մը կը տեսնաս երկինքին երեսը, ոչ
անձրեւի կաթիլ մը կիկնայ հողին վրայ և ոչ
ալ ձիւնի հասիկ մը կը թիթեռնիկնայ օդին
մէջ : Մեղմ ու ընտիր կլիմայ մը, առտու ի-
րիկուն թեթեւ զովութիւնով մը ակորժե-
լիացած : Հրաշալի վերջալոյսներ որոնք խոտ-
լական վերջալոյսներու պէս կը տեսնեն, եր-
կար կը տեսնեն զիշերին իսկ մէջ և զիթա-
կան չըջանակ մը կը դառնան անհուն ու ան-
բաղդատելի համայնապատկերին որուն մէկ
կողմէն Սպանիոյ սահմանադաւար կը գու-
շակուի, միւս կողմէն Միջերկրականի թո-
քերը կը չ'չեն և անդիէն երկնային բնա-
գեղ Ռիվիերան կը ղգացուի :

Եւ սակայն, տարօրինակ զուգադիպու-
թիւնով մը, կառախուժեալն վար իշամ վայր-
կեանիս՝ երբ Մօնրէլիւի կայարանէն դուրս
ոտք կը կոխեմ, անօրինակ փոթորիկ մը, սաս-
տիկ ցուրտ մը, ձիւնախառն անձրեւ մը, հով
մը կը փրթին ու կ'իյնան զարհացած քաղաքին
վրայ, չարաթ մը ամբողջ սեւեւով։ Դժուա-
րին է վիճակս։ Ոչինչ կը ճանչնամ քաղաքին
մէջ։ Անձանօթ ու անշուն պանդոկի մը խորը,
կորսուած մնացած եմ։ Յետոյ ու ամայի փո-
ղոցներուն մէջ օրը հազիւ մէկ երկու անգամ
ինքզինքս կը վտանգեմ, երթալ փնտռելու
համար կոկիկ ու յարմար սենեակ մը ուր կը
մտադրեմ կենալ քիչ մը երկար ատեն։ Ինծի
այնպէս կուգար որ այս օգը պիտի միշտ չա-
րունակէր այսպէս։ Յուսահատած էի մանա-
ւանդ որ ամենէն աւելի կլիմային համար էր
որ նախամեծար սեպած էի ես հոս գալ։ Տաք
սեղերու միջ յեղակարծ ձմեռ մը կրկնապէս
աղետալի է, ինչու որ ձմեռուան խստութիւն-
ներուն դէմ նախապէս բնաւ չեն պատրաս-
տուիր, ինչպէս հիւսիսի երկիրներուն մէջ։
Վերջապէս, օր մըն ալ գէշ աղէկ սեւե-
ւակ մը վարձեցի բանսիօնի մը մէջ ուր փո-
խադրուեցայ անմիջապէս։ Ատ սենեակին ու
բոլոր տալուս զլխաւոր պատճառներէն մէկն
ալ, իմացած ըլլալ էր որ միեւնոյն բնակա-
րանին մէջ ինէ զատ Պոլսեցի Յոյն մը միայն
կար իր Տիկիճին հետ։ Նախ բաղնիքիւն
չըլլալը եւ յետոյ քաղաքակից մը գտած ըլ-
լալու հաճոյքը, այդ անձանօթ քաղաքին
մէջ, մեծապէս միտքարեցին զիս։ Իրիկունը
տանտիրուհին ներկայացուց միւզ իրարու Պոլ-
սեցի զիւրակեցիկ ընտանիքի աղնուաբարոյ
զաւակ մըն էր ան, որ իր բարեկամութիւն
հետ, միեւնոյն յարկին տակ կը բնակէր ինծի
հետ։ Գրեթէ քուլի սենեակս։ Երբոր բարե-
կամութիւն կ'ըսենք, բնաւ պէտքէ զարմանալ։
Երբ քսանըհինգ երեսուն տարու առոյգ կըտ-
րիճներ կուգան հոս ուսանողութեան դժուա-
րին շրջան մը բոլորելու, անպատճառ պիտի
ունենան անկէ հատ մը որ մէկէ աւելի պէտ-
քերնին կը հոգայ տունին մէջ, իրր տան տի-
կին, իրր ընկերուհի, և կը թեթեւցնէ իրենց
այդ տեսակ մը կամաւոր ու բռնի աշխատու-
թեան դատապարտուած աքսորին տաղտուկ։

Անկերպ է բոկ որ, այդ միտքարուծիւնը
հարուստի զաւակներուն միայն տրուած է։
Ուսանողի կեանքը, եւրոպայի մէջ, իմ
ճանչցած կեանքերուս ամենէն աշխուհակը,
ամենէն արկածալիցը, ամենէն զրօսալիս, ա-
մենէն խենթը ու ամենէն տաժանելիս է։ Ոչ-
ինչ կայ որ սակայն անոր չափ կարենայ ա-
նուշ հետք մը ձգել յիշատակներուդ մէջ։
Օրեր կան ուր ծայրայեղօրէն մտահոգ ես, գի-
շերներ կան ուր առանց գրպանդ սու մը ու-
նենալու միտքս անտէրի մը պէս անփոյթ ես
վաղուան համար և կ'երգես, կը խաղաս, կը
ցատկես։ Գիշերներ ալ կան ուր կը լուսցնես
կարգալով ու կարգալով, աշխատելով, տըք-
նելով, միշտեւ օրեր ունիս ուր ջլատող ան-
հուն վատութիւն մը, թուլութիւն մը կը
կոխէ վրադ, և ծուլօրէն կը քնանաս մինչեւ
իրիկուն, իրր թէ քնանալու եկած ըլլայիր
հոտ։ Իսկ քննութեան օրերը այն միակ դժու-
րակ պահերն են ուր ուսանողը, անհոգ ճը-
պուռ, վայրկեան մը լուրջ է ու մտազբաղ։
Անկէց անդին Աստուած մեծ է։

Ճաշի ատեն երկար բարակ կը խօսինք նոր
բարեկամիս հետ որ հեռուէն հեռու ճանչնոր
կ'ըլլայ ինծի։ Տեղեկութիւններ կու տայ հայ
ուսանողներու վրայ որոնց կը խոստանայ
ներկայացնել զիս։ Իր պատմութիւնը կ'ընէ
ինծի չորս բառով և տարիներէ ի վեր ներսը
դսպուած բան մը դուրս տալու բուն եռան-
դով, մեր յեղակարծօրէն հիւսուած մտերմու-
թիւններուն մէջ։ Աղջկան պատմութիւն։ Ծը-
նողքի ու աղգակներու ընդդիմութիւն։
Առսու մըն ալ զինքը շողենաւ կը գնեն և
Եւրոպա կը խրկեն, ուր ինք կ'որոշէ Մօնրէ-
լիէ անցնի և բժիշկ ըլլալ։ Աղջիկը կը կար-
գուի ուրիշին հետ։ Ինք ալ հոս մէկէ աւելի
բարեկամութիւններ փոխած է և թուրքերէն
լեզուով կը բացատրէ ինծի ատոր առաւելու-
թիւնները, տասնիկ ապականած միջոցորտի
մը մէջ ուր փառացումը շատ հեռու չի լարեր
իր ծուղակը, անփորձ աղաքներէն։ Երկու
տարի վերջը, իր սիրած աղջիկը որ կարգուած
է ուրիշին հետ, ծնողաբերութեան ատեն կը
մեռնի։ Եւ այդ պատմած ատենը դեռ իր
սիրտը կը վառի ու արցունքներ կուգան ա-
պակիւնալ իր աչքերուն մէջ։

Մէկ կարեւոր քննութիւն մը ունի դեռ և անկէ վերջը միմիայն Թեզը կը մնայ իրեն գրել: Որով երեք ամիսէն ալ Տօքթօր է: Եօթը տարի է որ Մօնթէլիէ է և անգամ մը միայն Պոլիս կրցած է երթալ, իր սիրունիկն մեռնելէն ետքը: Հինգ տարիի մէջ արդէն իսկ պէտք էր բժիշկ եղած ըլլալ և այդ երկու տարիներուն կորուստը կը ջանայ պարտը կել ինք. զանազան աւարկութիւններու տակ, որոնք փտտուկ կ'երեւան ինծի: Ծըն-մարտութիւնը հոն է որ, նոր եկած աստիճան իր նախկին սէրը մոռնալու համար, տարի-ներով անհոգ, անաշխատ, զրօսալի ժամա-նակ մըն է անցուցած: Արդէն կարելի ալ չէր չի խոստովանիլ որ բժիշկ ըլլալու շատ յարմար միտք մը ու խառնուածք մը չէր ու-նեցած երբեք: Գրասէր, իր առջի սիրուն վրայ ոտանաւորներ հիւսած էր և մինչեւ հիմա ալ Պոլիսի յունարէն թերթերուն կ'աշ-խատակցէր ցանցառաքար: Եթէ իր ընդու-նակութեան ձգուէր, թերեւս բանաստեղծ մը ըլլար, մինչդեռ հիմա... Վերը յիշուած կա-րեւոր քննութեան մէջ չէր յաջողած վերջին անգամ և հիմա, երկու ամիս անդու աշխա-տութենէ մը ետքը նորէն պիտի ներկայանար քննիչներուն: Ան ինչ մտահոգութիւն, ան ինչ սրտայուզութիւն էր մինչեւ այն օրը ու գնաց մտաւ քննութեան և անցուստի կեր-պով, բարձր նիշով մըն ալ յաջողեցաւ անց-նիլ: Բաղդի խնդիր:

Հիմա, ա'լ Տօքթօր կը սեպուէր: Թեզը միայն կը մնար զրել որ սակայն էն զիւրին բանն է, թէ և էն դժուարը կարծենք մենք: Ահ, ինչեր էր քաշեր մինչեւ հոտ համեւելու համար: Ինք որ այնքան փափուկ սիրտ մը ու մաքուր բնաւորութիւն մը ունէր, ամիս-ներով տարիներով խաղացեր էր մեռելներու, միքրօպներու, հիւանդներու հետ: Ինք որ հանգարտ, երազող խառնուածք մը ու-նէր, վայելքի սիրահար, տարիներով լողա-ցեր էր հատորներու մէջ, համեւելու համար այն օրուան ուր վերջապէս պատկուած պիտի տեսնար իր աշխատութիւնները ու ծնողքին ակնկալութիւնները: Եւ ամէն անգամ իր բա-րեկամներուն՝ Թեզ անցընելու հանդիսաւ որ արարողութեան ներկայ դանուելուն ու չը-

նորհաւորելուն՝ իրեն համար իսկ սարքուելիք հանդէսէն մասնաւորապէս առածի պէս կ'ըլլար և անհամբեր օրերը կը համբէր: Տարիներով հեռու իր ծննդավայրէն զոր կը պաշտէր, ազգականներէն, իր սիրած բաներէն, անհաշիւ եւ ուժասպառ կեանք մըն էր վարեր: Ամէն օր կը խօսինք Պոլիսի վրայ հաւատար անձ-կանքով, կը խօսի արեւելեան երաժշտութեան վրայ, որուն համար, իր ճշմարիտ սիրահար ու հովարտա, հոգի կուտայ և որ տառապած մարդու իր ջիւղերը կը ցնցէ, ախրութիւնով կը համակէ:

Գրեթէ միշտ, յիշատակներու կծիկը քակ-ուած պահուն, դաւաթները անդիտակցօրէն ու անհաշիւ կերպով կը պարպուին ու կը լեց-ուին՝ հարաւային Ֆրանսայի պատուական ու անապակ գինիով: Երբեմն աղուոր ձայնով, արեւելքի բարեկամներ կը հրաւիրենք, ու-րոնք եկեղեցական ու սիրային երգեր կ'եր-գեն մեզի, ձալի ժամանակ: Միակ բանը որ-մէ կը զգածուինք հաւասարապէս, ամենքս ալ հեռու մեր ծննդավայրէն ու անոր կարօ-տովը եփած, զրկուած մեր սիրելիներէն ու անոնց խնամքներէն, ամենքս ալ արիւնտոտ միտքով դժբաղդութիւններով: Մէկը ան-ձայն, արցունք կը թափէ, միւսը սիրտին խորէն տպրիւն կը պոռայ, անդին լուծով գաւաթները կը լեցնէ:

— Իչէլիմ մի... կը հարցնէ մէկն ալ ան-դին, երբ ամէնքը մէկ,

— Իչէլիմ ես', իչէլիմ, կը պատասխանեն գաւաթներուն վրայ նետուելով: Մինչդեռ յոյն բարեկամիս, որ արդէն իսկ «քէյֆ» է, Ֆրանսայի բարեկամուհին բան մը չի հաս-կընար մեր միօրինակ երաժշտութեան, զոր տաղտկալի կը դանայ և կը դարմանայ որ այդքան կը խանդավառինք անով: Օ՜հ, եր-բեք հասկնալիք ալ չունի մեզի, քանի որ մեր գեղածիժաղ ախրուն վրայ չէ ապ-րեր, չէ սիրեր, չէ՛ տառապեր: Բայց ասով հանդերձ, մեր պոթիկայող ու յուզումնալից ուրախութեան ինք ալ վարակուած, բերա-նաբայ տիւրաները ցուցադրելով և պղտիկ տէքերը քթթելով, կը մասնակցի մեր խել-խօլ խմելարանութեան և գաւաթը ուժգին

կը դարնէ մեր դաւաթներուն, իր սուր ձայնովը, առանց հասկնալու ինչ սխալ միտալ թուրքերէնով մը կրկնելով մեզի հետ.

— M'itchlime! m'itchlime!

Ճաշէն ետքը, իրմէն դատ, ամենքս ալ, կէս գինով հոս ու հոն կը փութինք, siesteի համար, հաստ սիկարներ ծամծմելով ակռայներնու տակ: Ամէնքն ալ, ինծի ի պատիւ մէյմէկ բան կը պատմեն իրենց կեանքէն, մանաւանդ ուսանողական կեանքէն որ կը չհաղորդուէ զիս այնչափ որչափ արքայութեան մանրամասն նկարագրութիւնը պիտի ընէր բարեպաշտ հաւատացեալ մը: Յոյն բարեկամս սկսաւ.

— Անցած տարի աս ատեն էր: Հինգ փարա չիկար դըսլանա: Ատ պահուն ալ ճշդիւ amourette մը ունէի: Շաբաթ առտու մը, որոյնցի երթալ ժամացոյցս Mont-de-piétéն ընել: Հետեւեալ օրը ժամադրութիւն մը ունէի նոր բարեկամուհիիս հետ զոր կառքով Բալավալ պիտի տանէի: Տասնըոսր ոսկի արծող ժամացոյց մը ունէի, բայց այդ գումարին հաղիւ մէկ երրորդը աւանելու յոյս կրնայի ունենալ, գրաւի դնելով զայն: Արդէն չատ չանցած ալ դրամի կը սպասէի կոր: Երբոր գացի «բարեպաշտութեան լեռը» ինչպէս կը կոչէին զայն հայ ուսանողները, դեռ էր բացուած: Սկսայ վեր վար arpenter ընել: Մէջ մըն ալ հեռուէն կը տեսնամ որ մարդուն մէկը ուղտէնկօթ ու բարձրագիր զլսալի գրած և կրնակը բեցչաբի պէս ետքալսի քախրմ մը կապած, բարձ. սաւան, վերմակ ևայլն, եկաւ, քրտինքները ճակատէն վաղելէն, երբ ես քիչ մը հեռացայ՝ կըրնալիս դարձնելով և զայն չի տեսնալ ձեռացնելով, որպէս զի չի նեղուի զինքը այդ անբաղձալի վիճակին մէջ տեսնալէս: Կարճատեւ ըլլալով գէմքը աղէկ մը չէի զանազանած: Երբոր գրասենեակին դոյզ դրանը առջին հասաւ, նեակց վար կրնակին բեռը, ակնբերե գոհունակութիւնով մը նստեցաւ վրան և դրպանէն մեռաքս թաշկինակ մը հանելով, սկսաւ քրտինքը չորցնել: Երբոր, վերադարձիս մօտեցայ՝ կարծեցի ճանչնալ զայն: Ան ալ ինծի դարձաւ:

«—Պրէ', Եւովա'ն, դո՞ւն ես:

«—Կը տեսնաս կոր: Ո՞վ գիտէ ինչ խօսք խառներ են: պաշտպան օլաքալա երեք ամիս է փարա չի խրկեր կոր: Հոգիս ելաւ ա'լ: Չորս ամիսէն ալ պիտի լինցնեմ, գիտես, չեմ կըրնար կէս ճամբան մնալ: Եթէ վերջին տարիս չըլլար՝ կը ձգէի ետ կը դառնայի, աս ելլալիք ճամբայ չէ: Պարտք ըրի, ունեցածս ծախեցի, աւանդ դրի, ալ բան չի մնաց ետքալսէս դատ զոր տանտիրուհիս գրաւել ըսպառնաց երէկ: Ան ալ տամ լիննայ, քիչ մըն ալ նստարաններուն վրայ կը սլառկիմ, զարար հունի: Հին հաղուսաներս ալ ծախեցի, հիմա աս հաղածովս եմ. գոնէ ասոնք նոր են և ներկայանալի վիճակ մը կ'ունենամ Տօքթօր ելած օրս:

«Ժամացոյցիս դրամէն իրեն ալ բաժին հանեցի և գէթ այն օրը մահիճը գրաւի չի դրաւ և ետ խրկեց մէկուն միջոցով: Բայց ինչ որ միտքէս բնաւ պիտի չելլայ, ան ալ, ատ չիք ու գեղեցիկ սղան է, ուղտէնկօթով, սիլէնարօյով, հարմարիքի երթալու պէս, որ կրնակը բեռցած հին ու մին շիթեներու, բարձերու դէզ մը, բաղմամարդ փողոցներէն կ'անցնի հրեայ բաշավաճիի մը պէս: Հիմա յաջող Տօքթօր մըն է ան, իր ծննդավայրին մէջ, ուր ապահովարար միշտ կը միշտ այդ memorable օրը իր ուսանողութեան»:

Յետոյ կ'անցնի իր անձնական շահատակութիւններուն, լեցուն ամսաթուակ մը կը ստանայ հօրմէն, բայց ատկէ դուրս նորէն կը քաշէ թէ՛ հօրմէն, թէ՛ մօրմէն: Գիրքի, աուրքի, գործիքի, միքրօսքօրի անուններուն տակ առած դրամներէն դատ, որոնց ամենքն ալ շուսյտութեան, կերութեան, հորիզոնականներու վաճառուած են, խելքէ միտքէ չանցած միջոցներով դրամ կը հայթայթէ իր ուսանողութեան առջի տարիներուն մէջ մանաւանդ, ուր դեռ չի մարած իր սիրոյն կրակը կը կսկծացնէր սիրտը: Աստուծոյ մէջ ամենէն հանճարեղը ու զուարճալին է երկու հարիւր ֆրանքի բացառիկ շորթ ում մը հօրմէն սա՛ տարօրինակ ձևին տակ.

«Գալուս երրորդ տարին էր և ես երկրորդ կարգին մէջն էի դեռ: Երկու անգամ քրնութեան ներկայացայ այդ տարեվերջին, և երկու անգամուն ալ մերժուեցայ: Չի յաջո-

ղելովս՝ քննութեան համար տուած գրամներու մէկ մասը մէջ խաղաց։ Այդ տառնները, դրամի չափէն աւելի պէտք ունէի արդէն, Օնորինը նոր ձեռք անցուցած ըլլալով։ Ամենքդ ալ գիտէք թէ Օնորին ինտո՞ր կուտէ փարան։ Նորէն քննութեան ներկայանալու ատենը եկած էր և ոչ միայն գրպանս պարապ էր, այլ պարտք ըրած էի անհաշիւ։ Հայրս կը կրկնէր որ սովորական ամսաթուղակէս զատ, բոլը մը պիտի չի խրկէր։ Առաւ մը, մտահոգ հաղուած ստեղծ, յանկարծ անակնկալ խորհուրդ մը միտքս կը ծակէ։ Ապահովարար, ոչ Արքիմէտէս, ոչ ալ Գոյումպոս աւելի մեծ գոհունակութիւն մը ունեցան իրենց գլխոսերը ըրած ատեն։ Անմիջապէս Petit Méridionalի խմբագրատունը կը վազեմ։ Նրկու Ֆրանք կուտամ և հետեւեալ ծանուցումը դնել կուտամ։ «Առջի օրը, Քոմէլտի հրապարակին վրայ, պարոն Ք... կորսնչուցած է երկու հատ հարիւր Ֆրանքնոց պանքատմս, թ. 25962, serie E. 237 և թ. 11892, serie B. 19։ Գանողին ու բերողին պարգեւ»։ Նոյն օրը իսկ հրատարակուած լըրագիրէն հատ մը կը խրկեմ հօրս, հաստ ու կապոյտ մատիտով ստորագծելով այդ հատուածը։ Հետեւեալ օրը երկու հարիւր Ֆրանք ծամբայ հանուած է հասցէիս Պոլիսէն»։

Հարուստ ու աղքատ ուսանողներու վրայ ալանգակ anectodesներ տարափի պէս կը թափին ամէն կողմէն և ես չեմ կշտանար մտիկ ընելով ու զարմանալով։ Գաւառացի հայ մը կը պատմէ իր մօրեղբոր տղուն պարագան որ տասնըմէկ տարի կեցած է հոն, առանց նոյն իսկ նաւաջին տարիին քննութիւնը անցընելու։ Հասած օրը, կայարանին մէջ տըգեղ կնկան մը զարնուեր է և տարիներով փակուած ապրեր է անոր հետ իր տունին մէջ, միշտ գրելով իր ծնողքին որ առաջիկայ ամիս Թեզը պիտի առնէ ու վերադառնայ, ու միշտ զանազան պատրուակներով յետաձգելով զայն։ Տարիներով խաղացեր էր ուրդ կառակերպութիւնը։ Օր մըն ալ մեռեր էր հայրը, և իրեն ինկած փառանգութիւնը լիւրել տալով ան ալ մէկ-երկու տարիին մէջ կերեր է՝ «վո՛ւր բաթլաւն» և վերջապէս սուանց դրամի, լքուած, յուսահատ ու ծիւրած, անձնասպան եղեր է։

Պատմութիւնը կ'ընեն հարուստ գաղղիացի երիտասարդի մը որուն երկու օր առաջ ներկայացուած էի։ Ոչ ոք կը յիշէ անոր դպրոց մասած թուականը, բայց ամէն մարդ գիտէ որ երկրորդ կարգէն վեր ելած չունի բնաւ։ Գեղադէմ ու վայելչահասակ երիտասարդ մըն է ան, անթերի ու ճոխ հագուածքով։ Նորաձեւօրէն կտրուած լայն քառակուսի մօրուք մը որուն ամէն մէկ թելին վրայ, երկար բարակ խաղացուած, խնամք թափուած է։ Կիները ձեռքէ ձեռք կը քաշեն զայն։ Բայց ինչ որ ապշեցուցիչ է, անհաւատալի է, սա է որ իր նախկին դասընկերներէն մէկը, այսօր բրօֆէսօր, իրեն դասախօս եղած է, և ինք հիմա կը դուռէ զայն իբր նախկին ընկեր, ինչպէս ատենով։ Եւ ատիկա անդուգան պարագայ մըն է Universitéին տարեգրութիւններուն մէջը։

Ահ, ինչ որ նեղացուցիչ, զայրացնող էր այդ ոչնչութիւններուն քով, որոնց կեանքի ոչ մէկ դիւրութիւն կը պակսի, այն աղքատ, տակը բաց, անթի ու ցուրտէն դողացող ուսանողներն են որոնք ամէն բանէն զրկուած ամենէն աւելի միջոցը կը գտնան դասերին սորվելու, առանց դասադիրքի քննութեան մտնալու, առանց արձանագրութեան աւուրքը վճարելու համար սանթիմ մը ունենալու դրուպանուն մէջ և ապրելով՝ առանց իրենք ալ գիտնալու թէ ինչպէ՛ս։ Կան որ յաւիտեանական պարտքի տակ են, եւ ամէն ամիս սննեակ, ճաշարան, լուացարար կը փոխեն, միշտ իրենց անձանթ, անկոխ տեղուսնք որոնելով քաղաքի քարտէսին վրայ։ Կան որ ամենէն նուաստ, երբեմն ալ ամենէն աղտոտ կեանքերու կը համակերպին։ Կիսերու շնորհիւ կ'ապրին։ Կան ալ որ ուսումնին կիսատ կը ձգեն։

Ուրիշ մը կը նկարագրէ մեզ, յոյն ուսանողներուն վիճակը, որոնք բաւական բազմաթիւ են հոտ։ Կէսը, հարուստի գաւառներ, իրենց հոմանունիներն ունին։ Միւս կէսը, նուազ կարողութեան տէր, իրեն բան դօրծ ըրած է կիսել՝ իրենց բազդաւոր ընկերներուն կիները։ Եւ այս այսպէս, տարիներէ ի վեր կը տեւէ, լեցուն կոխով, նախան-

ձով, դայթակղութիւնով որոնց արձագանգը կուգայ շատ անգամ մինչեւ սրճարան ուր ամէն իրիկուն կը հաւաքուին կանանչ սեղաններու շուրջը: Զուարճալի կը գտնանք:

Տուներնուս առջեւէն, որ քաղաքին գլխաւոր եկեղեցիին մօտ ըլլալու հետքաղդութիւնը ունի, յանկարծ մեռելական թափօր մը կ'անցնի, քահանային ուռուցիկ մօրլուտքին հետ համաքայլ առաջանալով: Ամէնքս մէկ, հայ, յոյն, ֆրանսացի և այլազգիներ, կէս գիւղով, ա'լ աւելի զուարթացած, խօլ քրքրիչներով, կը պօռնանք երգելով, մեռելական եղանակի մը յարմարցուած սա հայերէն բառերը:

— Կը տանին կո՛ր... կը տանին կո՛ր... երբ մուսլիմադէմ ու յօնքերնին պոստած յուզարկաւորներ, զարմացած մեր կողմը կը նային:

Եւ ահա տաք վիճաբանութիւն մըն է կը փրթի թէ ո՛ւր պէտք է թաղել հայ մը կամ յոյն մը, երբոր մեռնի հոտ՝ ուր ոչ եկեղեցի ունինք ոչ ալ գերեզմանատուն: Յոյն բարեկամս կը պատմէ որ հայ մը կայ թաղուած քաղաքին բողոքականներու գերեզմանոցը, և յոյն մը՝ կաթողիկ մեռելներու հանգստավայրին մէջ: Եւ կ'աւելցնէ.

— Ես ոչ հոն պիտի ուղէի թաղուիլ, ոչ ալ հոն: Պիտի փափաքէի որ մարմինս փոխադրեն մեր դպրոցին *salle de dissection* ուր յօշոտեն զիս և փորձի առարկայ ընեն: Թող զիտութիւնը, ընկերներս, մարդկութիւնը օգտուին յետին մնացորդէս ինչպէս ես օգտուեցայ ուրիշներէն.

Մէկը կը բողոքէ, միւսը հակառակը կը պնդէ. բայց ոչ ոք լրջօրէն կը խորհի՝ օտարութեան մէջ մեռնելու գոյազգ հեռապատկերին, բաց ի ճամբորդութեան ատեն չոգեկառքին մէջ՝ ուր ճղակաւոր ելլալու վայր կայ, ինչպէս նաեւ չոգենաւին մէջ՝ ուր ծովը նետուելու հաւանականութիւնը: Եւ նորէն ամենքը մէկ, խօլ աղաղակներով կը պոռչտան միաբերան հարսանեկան երգասացութեան մը պէս ուրախ ու զուարթ, խնդալով.

— Կը տանին կո՛ր... կը տանին կո՛ր... Եւ սենեակէն դուրս կ'ելլանք օրուան մնացած մասը ու գիշերը ամբողջ անցընելու մեր

յոյն բարեկամին սարքած մէկ զուարճանքին մէջ: Մոռցայ ըսելու որ այս վերջինը, ստամոքսի ցաւ մը ունի երկար ատենէ ի վեր: Խիթեր կը զգայ միշտ աղիքներուն մէջ: Ամենէն նշանաւոր բժիշկները, բրօֆէսօրները, կը քննեն, կը խնամեն զայն, առանց արդիւնքի, առանց բարւոքումի: Վերջին քննութեան տաժանելի աշխատութիւններէն և այդ առիթով ըրած խրախմանքներէն ի վեր մանաւանդ, ա'լ աւելի սաստկացած է ցաւը: Խեղճ տղան վաղը բժիշկ պիտի ըլլայ, ասոր անոր ցաւերը գտնալու ու բուժելու պիտի կոչուի և իր ցաւին ի'նչ ըլլալը չի հասկնար: Եւ ոչ միայն ինք չի հասկնար, այլ նաեւ իր մեծահամբաւ դասատուները որոնք զիտութիւնը կ'լլածի ձեւեր ունին: Սմէն օր նոր հիւանդութեան մը անունը կուտան և ապա զայն Տօքթօրը խորասուզուած հաստ հատորներու մէջ, այդ հիւանդութեան պարագայները և զարմանք կ'ուսումնասիրէ: Ամէն օր *régime* կը փոխեն: Օր մը միմիայն կաթով անանիլ կը յանձնարարեն, ուրիշ օր մը՝ միայն հաւկիթ: Շատոնց ի վեր զրկուած է իր սիրական կերակուրներէն և մասնաւորաբար թոքերը կ'լլելով կը յիշէ Պոլսական մեր կերակուրները, որոնց շուքն ալ չիկայ ուրիշ տեղեր, մանաւանդ հարաւ. Թրանսա ուր շատ գէշ են կերակուրները: Զարմանքով ու կարօտով կը նայի մեր ախորժակին վրայ, որուն յարգը գիտնալ կը յանձնարարէ մեզ գուշակելով որ, եթէ անանկ առատ ու ռնկարգ ուտենք, հիւանդ պիտի ըլլանք օր մը:

— Բժիշկ, բժշկեա՛մ զանձն քո, կը պատասխանեմ իրեն, գտածս լափելով: Եւ կը քննադատեմ իր խիստ շատ ծխելու ունակութիւնը: Ճաշի ատեն իսկ, մէկ սիկարը միւսէն կը վառէ: Օրական չեմ գիտեր քանի՛ բաքէթ: Պարզմտութեանս մէջ, ես ատիկա կը գտնամ իր ախորժակ չունենալուն ու ստամոքսի ցաւերուն պատճառ: Կը խնդայ վրաս:

— Ես բժիշկ եմ, կ'ըսէ, գիտեմ որ ասակից մնաս չի կրնար գալ ինծի: Զգէ որ մնասու կար ալ եթէ ըլլար, չի պիտի կրնայի հրաժարիլ անկից: *C'est plus fort que moi*: Նմանապէս զբօսանքը ու ողբից ըմպելին: Պոլսէն բաժնուելէս ու ան ատենի վիշտերէս

ի վեր միակ հեշտանքս է ան: Մեռնիմ որ ձգեմ դայն: Բան մը կայ ներսս որ կ'եփի միշտ հակառակ տարիներու աշխատութիւններուն, սանձարձակ անառակութիւններուն, յարափոփոխ բարեկամահիներուն մէջը վնասուած մոռացումիս, միխթարանքիս: Մանաւանդ Անոր մեռնելէն ետքը, կեանքը ալ իմաստ չունի ինծի համար: Կ'ապրիմ՝ հաճոյք պատճառելու համար զիս սիրողներուն: Կ'աշխատիմ ու խնայեմ ինքնիմ կ'ընեմ, ինքզինքս վիշտերս մոռնալու համար:

Այս ամիս արդէն իսկ սկսած է Թեղի աշխատութիւններուն, բայց բժիշկները կ'արգիլեն: Վիճակը ծանրցած է, ցաւերը անհանդուրժելի ըլլալ սկսած են: Պոլիսէն անդամալոյծ մայրը, նամակ նամակի վրայ կը գրէ և կ'աղաչէ որ գայ: Կարօտէն կը մեռնի կոր ա'լ: Ասդին նոր և վերջնական consultationէ մը ետքը, մօտ հիւանդութիւնէն կը դրոշման վրան. կուրալի (appendicite): Թոքերն ալ տկար կը գտնան և կուրալին կարելի հանելու գործողութիւնէն ետքը, կը կը պնդեն որ երթայ տարի մը մնայ ծննդավայրը, լեռնոտ տեղ մը, բացարձակապէս չաշխատելով: Այդչափ սպասումէ՛, աշխատութիւնէ, ծախքերէ վերջը, տարի մը յետագուած իր ասքթօր ըլլալը, վայելումը, պսակումը յոգնութիւններուն, պանդխտութեան, ցաւերուն: Հիւսիսէն կը փոխադրուի: Հայրը, հեռագիրով տեղեկութիւն առած, կու գայ կը հասնի: Գործողութիւնը յաջողապէս կը կատարուի: Ամիս մը վերջը հայրը կը մեկնի. լաւ վիճակի մէջ ձգելով աղան որ վերքը բոլորովին գոցուելուն պէս պիտի ելլայ հիւանդանոցէն և Պոլիս գայ: Վերքը չէ գոցուեր սակայն: Թոքերուն հիւանդութիւնը կ'առաջանայ և երկու ամիս վերջը, իրիկուն մըն ալ, հիւանդանոցին անկիւնը, հեռու ծնողքէն, ծննդավայրէն, բարեկամներէն, պատն երեսին կը մեռնի: Գիտութեան, — յատուկ անունի մեռնափութիւնը ունեցող այդ ձիւաղին, — բառարանին մէջ անուն չէր պակսեր հարկաւ, հարիւրերորդ անգամը ըլլալով մկրտելու համար, սարաքաղդ երիտասարդին հիւանդութիւնը: Աս հեղու ալ tuberculose généralisée կո-

չեցին և դադարին կտարիքը գոցեցին: Ուրիշ բան էր տղուն ցաւը, միամիտանէր: Սիւրտը հիւանդ էր անոր:

— Իշէլիմ, իշէլիմ, պօռալով խնայեմ զուարթութեան մը մէջ եղած ատեննիս էր որ ինչպանք, այդ տառապամ կտրեմին մահը և հետեւեալ օրը, իր այնքան յաճախած salle de dissectionին մէջ յօշոտուելէն առաջ, ետեւէն դացած ատեննիս, ամենազգի ուսանողներս լալով մոնչեցինք, մեռելական տրտում եղանակի մը յարմարցուած հայերէն սա՛ բառերը.

— Կը տանին կո՛ր... կը տանին կո՛ր...

Եւ այս անգամ, մի միտայն, վշտաշարժար մարդու, ցաւով բարձրուն ու սրտազգեցիկ իր ձայնն էր որ կը պակսէր, մահերգու այդ համերգութեան մէջ:

ԶԻՅԹԷ-ՍԱՐԱՅ.

ՆՈՒԻՐԱԿԱՆ ՈՒՆՏԱՏԵՂԻՆԵՐ(*)

ՄԵՆՑ ԱՌԱՋՆ. ԹԵՄԻՆ

27. Դաղճոյ վանք, Մշոյ հիւսիսային կողմը: Բազմաթիւ սրբանոցներով լի, հնու-մըն նշանաւոր ուխտատեղի: Բայց թէ ո՞ր սրբերու անունն յուրիւրուած են սրբանոցը, չկայ տեղեկութիւն: Տեղացիք լ'ըսեն թէ Ս. Տարրօյի գերեզմանն է հոն:

28. Ս. Թումայ Առաքելոյ վանք, Մշոյ դաշտ, քարուկիր եկեղեցին դեռ կանգուն կը մնայ և վաղեմի հաստատութիւն մըն է:

29. Ս. Վարդխաչի վանք, Մշոյ դաշտին արեւելահարաւ, համանուն գեղին մօտերը, 5—10 վայրկեան դէպ աղեւելք, այժմ ամառի, նուիրական ծառատանով, հնուց նշանաւոր ուխտանոց:

30. Ս. Յակոբայ վանք, այժմ լքուած, սակայն ուխտելի, Տօտան անուն գեղին մօտերը սարաւանդի մը վրայ:

31. Ս. Մատթէոս, չարաթացեալ կամ անապատացեալ վանք, Սառկուռան գեղին մօտերը. անունը միայն կը յիշուի:

32. Ս. Կարճակ վանք՝ Մշոյ արեւմտա-

(*) Շառ. Մասիսի նախորդ քիւէն եւ վերջ:

հարաւ՝ Շենիք գիւղին մօտեր, այժմ ամայի, դերբուկները միայն կը մնան:

33. Ս. Մարեամբի վանք, նոյն գիւղին մօտեր, ամայացած: հիմայ տեղացիք կ'անուանեն—Տէր Մայրամ—(վանք Մարեամու):

34. Ս. Աստուածածին, ի Խոծոծվանք գիւղ՝ Շատախ՝ Մշոյ Ս. Աղբերիկի մօտեր: Քարուկիր եկեղեցին դեռ կանգուն է իբր գեղական եկեղեցի:

35. Ս. Մարաթուկի վանք, համանուն նշանաւոր լերան վրայ, ուխտելի Խաչի պահոց, այժմ փոքր մատուռի մը վերածուած:

36. Մար—Դանէլ—(Ս. Դանիէլի վանք) Խարդան դաւառակին Արծուիք գեղին մօտերը, այժմ աւերակ:

37. Ս. Գէորգայ վանք — մականուամբ Քարավանք, ամայի, ի Հոսնուտ Խարդանի:

38. Ս. Կարապետի վանք, ի Հաթնի գիւղ—Սարդանի. ըստ աւանդութեան՝ ունեցած է բաղմամբիւ միաբանութիւն մը:

39. Ս. Յակոբայ վանք, Խիան գաւառակի Սաղղան գիւղին մօտը, Կեփին անուն սարին վրայ:

40. Ս. Եղիայի վանք, նոյն գաւառակի Հեղին գիւղին քով, նշանաւոր ուխտատեղի, ուխտի օրն է Վերացման Ս. Խաչին օրը, ամէն 7 տարին անգամ մը եկեղեցիին տանիքը տերեւներով կը ծածկուի, և կանանց դասի մուտքն արգիւտած է. ամայի է այժմ, միայն եկեղեցին կը մնայ:

41. Ս. Կարապետի վանք, Խոթայ դաւառ, Շնիստ գեղին մօտեր, ամայի, ունի ընդարձակ շինուածոց բեկորներ:

42. Ս. Ներսիսի վանք, Մանազկերտ անի մօտեր, $\frac{1}{4}$ ժամ հեռաւորութեամբ:

43. Ս. Դանիէլի վանք, դարձեալ Մանազկերտ անանի մօտերը: Խաչաքարերէն մէկը կը կրէ ՈՅԷ թուականը:

44. Խանդար վանք, Մանազկերտի գաւառակ աւանի մերձակայ Ակներ անուն գեղին մօտերը, ամայութիւնը 100 տարիէ աւելի է:

45. Ս. Կարապետի վանք, Մանազկերտի Գոթանլը անուն գեղին մօտ, եկեղեցին տաւալին կանգուն է իբր ժամատուն նոյն գիւղացիներուն:

46. Ս. Գէորգայ վանք, Մանազկերտ Գոթանլայէ գիւղին մօտ, ամայի:

47. Ս. Սարգսի վանք. հետքերը կը տեսնուին Մանազկերտ Տիւղնուկ գեղին արեւելք:

48. Ս. Սարգսի վանք՝ նոյնպէս դէպ ի հիւսիս:

49. Ս. Աստուածածնի վանք, Մանազկերտի Գարաճա գիւղին մօտերը, արտաքին չէնքերը ինկած, բայց տաճարը և գմբէթը տակաւին կը մնան կիսափուլ:

50. Ս. Յօնան Օծնեցիի վանք, Մանազկերտ՝ Նորատին գեղին մօտեր՝ բլրակի մը վրայ: Բուն եկեղեցւոյ տեղին վրայ կայ փոքրիկ մատուռ մը խճթածեւ—լուստուն—, որ ուխտելի է հայ բարեպաշտ կանանց: Հոն կ'աղմեր է Օծնեցի Հայրապետը եկեղեցական ծանօթ ժողովը—բաղմամբիւ եպիսկոպոսներով և վարդապետներով թուին տուժար ճՀէ (Քս. ի 728)ին: Տակաւին կ'երեւին վանքի պարիսպներու հետքերը. ունի նաև հին—ընդարձակ գերեզմանոց մը հսկայ գեղաքանդակ խաչաքարերով, որոնց մէկին վրայ գրուած է— «Ի Թուիս ՈԾԳ (653 Քրիստոսի 1204) Եւ Հայրապետս կանգնեցի զկենսական, կենսագիր, զկենդանատու նշանս զայս, յանուն Յօնան Հեղինեայ. ի յիշատակ ծնողաց իմոց Եղիանայ և Անդրեայ»:

Ասոնք ամէնքն ալ և դեռ ուրիշներ, ծառայող են ժողովրդեան, ոմանք անուշով, մեծ մասը անանուն: Շինուածոց դերբուկներ, փլուրանք խաչքարերու, բլիկ կամ ծառուկ մը նուիրական սրբանոց աղբերակով մը—ջերմուկով՝ նուիրական նշաններ են շաքաթայեալ վանքերու, որոնց մէկ կարեւոր մասը, մանաւանդ ի Մանազկերտ, պատկառանք կ'աղդեն իրենց հետքերուն ընդարձակութեամբ, կանգուն անկուն գեղեցիկ խաչաքարերով՝ վաղեմի արձանագրութիւններով: Դերբուկներ կան, որ դարեր անցուցեր են՝ դրեթէ հողամոյն ծածկուելու են բայց չեն մոռցուած ու կ'ընդունին դեռ հայ կին արմատին ծովսը ինկնելի և տիւալին հոգեկան:

ԳԵՂԱՄ



ԳԱՐՈՒՆ

Սա մայր բնութեան մարմինը հսկայ .
Կը սքափի մեղմիւ իր խորունկ բունեն՝
Երբ արեւին տաք շոյանքը կը զգայ
Ու կեանքն ցոլիւր զինքը կ'ողջունեն :

Լեռ , ձոր ու բլուր , դառն , պարեգ ու
ծառ .

Վերջ տուած իրենց ծանր խոհանքին ,
Թաւմ ժպիտով մը — կանանց ու պայծառ
ժպիտով կը սկսին բողբոջող կեանքին :

Գարնան արեւին ցոլերը սակայն
Անգոր կը մնան ու չեն փառաւեր
Այն խոր ձմեռը , իսկուր ու երկայն՝
Որ արեւը վաղ կը ճեշէ , ո՛հ , դեռ :

Ու պիտի ճեշէ որքան ասեմ որ ,
Կարօքիս վերքը միայն տանջէ զիս
Ու ջիւնը արեւը աչքերուդ աղուր
Սպիտակել չըզայ զայն , հոգիս :

Վ.

ԻՏԱԼԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՍԱԹԻԼՏԷ ՍԵՌԱՕ

Քառորդ դարէ մը ի վեր , իտալական
գրականութիւնը կը քննարկ կարծես : Իտա-
լացիները իրենց մտաւորական ոյժերն ու գոր-
ծունէութիւնը կը նուիրեն նորոգելու , հիմ-
նելու , ամրացնելու իրենց երկրին դիրքը :
Հիմակ որ այս արդիւնքը ձեռք բերուած է
ա՛յլ , արուեստներու եւ գրականութեան ճա-
շակը կը թուի վերածաղկիլ Տանգէի , Բէթ-
րարքաի , Ալֆրէսկիի Մաննոնի երկրին մէջ :
Կրագէտներու խիստ համակրելի սերում մը
սկսած է յառաջ գալ , Ֆոլիաձառո՝ աղնիւ ,
լուրջ ու խանդավառ , Քարուանա՝ ֆանթե-
զիսթ ու երգիծարան , Վէռլիա՝ կորովի նկա-
րող , առամադիկ խառնուածքով մը օժտուած ,
Ալֆրէսկի՝ համալուր թաղմագիր հեղինակ ,
և ուրիշներ դարձեալ , Պաուլլի , Պէպպէլիո ,

Յառինա . վերջապէս երկու ամէնէն հռչա-
կաւորները՝ Կապրիէլէ ա'Աննունչիօ և Մա-
թիլտէ Սէռաօ :

Վերջի այս երկուքը իրարու հանդէպ չա՛տ
գրաւիչ հակադրութիւն մը կ'ընծայեն :

Տ'Աննունչիօ հետաքրքրական խառնուրդ
մըն է սքանալի՜ալ ու լատին տարրերու : Զուի
ամբողջ նրբերանգները արտայայտելու սէր
մը ունի ան . բայը , մակդիրը , փափկօրէն
քանդակուած նախադասութիւնն է որ կը
սիրէ ան . նուազ սիրահար կնոջ քան սիրոյ ,
մեղամաղձոտ , աննման , երբեմն ճոռոմ , յաճախ
տողորուած Իպսէնի և Թոլստոյի ոգիով ու
անգիտակից հետեւող կամ խոհուն միտքը
ֆրանսացի քանի մը քերթողներու և վիպա-
սաններու , ինչպէս Կի տը Մօքսսան կամ Մօ-
սիս Մէդէուէնք :

Տ'Աննունչիօ՝ հիւսիսն է , Ֆիօրէնցա : Մա-
թիլտէ Սէռաօ՝ նաբօլին է , հարաւը : Այս վեր-
ջինը իր երկրին ամէնէն եղական դէմքերէն
մէկն է , զեղուն , ժողովրդական և չա՛տ հա-
մակրելի , և ունի նոյնքան արժանիք՝ որքան
համբաւ :

Ատոյ՜ Պաիսոն հիացիկ տողերով կ'ողջունէ
Տիկին Սէռաօի վերջին երկասիրութիւնը , Կա-
նանց սիրտը , աւելցնելով թէ պիտի չուզէր
խօսիլ անոր նախորդ գործերուն վրայ որոնք
թերեւս կը պարունակեն ամէնէն անկեղծ է-
ջերը զորս գրած ըլլայ կին մը :

Իր հիացողներէն մէկը , կը շարունակէ
Պաիսոն , կ'ըսէր ինծի .

— Մաթիլտէ Սէռաօ՝ Ալպեաններէն անգին
կը զրաւէ ահագին տեղ մը՝ բաւական դժ-
ուարասահման , այնպէս որ չկայ իրեն հա-
մարժէք ուրիշ գրագիտուհի մը : Միւսնոյն
ատեն փափուկ ու՞ պարզ բաները հրապուրիչ
կը դարձնէ : Ժողովուրդը կը սիրէ զինքը ,
վասն զի կը հասկնայ անոր լեզուն : Ինք ալ
ժողովուրդը կը սիրէ ու կը սիրցնէ , և անոր
բարեբէն կը գծէ այնքա՛ն նկարագրող ու
այնքա՛ն կենդանի պատկերներ որ նրբաճա-
ակներն իսկ չեն կրնար ինքզինքնին զսպել
հիանալէ : Անիկա՝ Իտալիոյ ժօրժ Սանը ու
Ալեքսանտր Տիւման է միանգամայն :

Այս սքանչելի դրուստիքը իրաւացի է ի-
րեն համար , կ'ըսէ Պաիսոն : Տիկին Սէռաօ

կրակուրաց կին մըն է։ Բորբոքած Վեռուսին է անիկա։ Հրաբուխին հուրքը կը շողայ իր սու աչքերուն մէջ, և, իր թաւախաղ ու ծանր ձայնին մէջ, կարգաւ, ուրախութիւնս ներ ու փայփայանքներ կ'անցնին։ Ձուարթամտութիւնը կը տրեք իր մէջ. յանկարծակի կը պոռթկայ, նախադասութիւններէ հտըք որոնք կ'անցնին ազմայայտ ու կ'աւարտին ջղաքիկ ծիծաղի հրթիռի մը վրայ։ Եւ սակայն, նախադասութեանց այս յորդուն ժայթքումը՝ հեռու որ եւ է դռնհիկ հանգամանքէ, նշանակելի ու թափանցող մոքի մը կը դաշնակցի։ Եթէ Տիկին Սէնաօ իր ողբերգութիւնովը նաբօլիցի է, Աթենացի է սակայն իր նրբութեամբը։ Իր դէմքը, յեղեղով ու մտածկոտ, այս երկու յատկանիշներուն դրոշմը կը կրէ։ Եւ, թէեւ օժտուած չըլլայ եւ զական գեղեցկութեամբ մը, ամէնուն հաճելի է սակայն։ Տիկին Սէնաօ, ամէն բանէ առաջ, վստահութիւն ու համակրանք կը ներշնչէ զիմացիներն։ Իր քով չի տեսնուիր այն խորամանկ քաղցրութիւնը որ իր ցեղին մարդոց յատուկ է։ Ըլլա՛յ իր վրայ, ըլլա՛յ ուրիշին վրայ խօսած ատեն՝ իր դատողմանը միշտ կորովի անկեղծութեան մը գրոշմը ունին։

Կ'արժէ իր կեանքին պատմութիւնը ամփոփել։ Եթէ քա՛նի մը անխոհեմութիւններ ու սխալումներ ունեցած է, կրնայ սակայն իրբեւ օրինակ ծառայել, ուրիշ տեսակէտով։ Որովհետեւ, ինքզինքը ամբողջովին աշխատութեան նուիրած կին մըն է։

Իր հայրը, 1848ին Նաբօլիէն Յունաստան գնաց և հոն ամուսնացաւ։ Մաթիլտէ Սէնաօ Բադրասի մէջ ծնաւ, 1857ին. հաղիւ երեք տարու էր՝ երբ հայրը զայն Նաբօլի տարաւ ուր իր հին աշխատութիւնը սկսաւ կատարել որ էր լրագիրներուն մէջ գրել։ Բաւական դժուարաւ աղբրուսը կը հայթայթէր ատով ուղեց իրեն համար անձնական թերթ մը հիմնել, ու զայն մշտապէս պահելու համար հազին նեղութիւններ կրեց։ Մաթիլտէ Սէնաօյի պատանութեան չըջած սահեցաւ զըրկանքներու մէջ, որոնց յիշատակը արձանագրած է իր *Il farnesio* Խօանքա վէպին մէջ, որ ինքնակենսագրութիւն մըն է։ Ինչո՛ւ ա՛յս պըղ-

տիկ, մամուլներու և թուղթի տրցակներու մէջ կը խաղար անխոյթ։ Թարմ մեղանին հոսը կը շնչէր ու կը վարժուէր տղարանական մըթնոյրարին, որ վերջը՝ իր առողջութեան անհրաժեշտ պիտի ըլլար։ Յաճախ տունը հաց չէր գտնուեր։ Երբեմն, հրաշագործ ոսկի մը կը հասնէր օգնութեան, զոր կը ծախսէին ուրախ զուարթ, ու անոր տեղը լեցնելու խընամբը նախախնամութեան կը ձգէին։

Ինչուա՞ր հեղինակուհին մեծցաւ տակաւ, քանի մը փորձեր հրատարակեց հօրենական թերթին սիւնակներուն մէջ. յետոյ, Հոսո՛ դնաց ուր սկսաւ աշխատակցիլ երգիծական, քաղաքական ու դրական լրագրի մը, *Capitaine Fracasse*։ Այդ քաղաքին մէջ հանդիպեցաւ արժանիքի՝ տէր մարդու մը՝ Լաուարու Սքանֆօլիոյի, կըքոտ վիճասէրին, և հետը ամուսնացաւ։ Չորս զաւակ ունեցան, ու յաջորդաբար երեք օրաթերթեր հիմնեցին, — *Corriere di Roma*, *Corriere di Napoli*, *Mattino*։ Առջի երկուքը արկածախնդրական բախտ մը ունեցան, իսկ երրորդը յաջողեցաւ։ Մէկ կողմէն, Տիկին Սէնաօ մինչ կը մեծցընէր իր կաթնակեր մանկիկները, միւս կողմէն սակայն կը սրբագրէր փորձերը, *mise en page* կարգի կը դնէր, յօդուածներ կը գրէր, վէպեր ու նորավէպեր կը յօրինէր։ Ու այս անթիւ աշխատութեանց կը դիմադրէր անվեհեր, անձանձիր։ Իր հինգերորդ զաւակին ատենն իսկ, Մաթիճօն նորէն նուազ պաշտուածը չէր։ Արուեստին սէրը միշտ վառ մնաց Տիկին Սէնաօյի քով։ Անիկա սիրեց լրագրութիւնը որ իր համբաւին առաջին տարածիչը եղաւ։

— Իտալիոյ մէջ, ըսաւ ինծի Տիկին Սէնաօ, կը յարէ Պաիսօն, լրագրութիւնը չունի այն հմայքը՝ զոր ունի Ֆրանսայի մէջ։ Չեր մեծ գրագէտները զայն կը մշակեն եւ անկէ համբաւի եւ օգտակարութեան յաւելում կը սպասեն։ Մեր մէջ, կ'արհամարհեն այդ բանը, ու ասիկա՝ աւելի կեղծ քան իսկական, արդարացի չէ՛, երբե՛ք։ Յաճախ զիս կը պարտաւեն լրագրութեան հաւատարիմ մնալուն համար։ Ինծի կը կրկնեն. «Ա՛լ թողուցէ՛ք ատիկա»։ Եւ ես անոնց կը պատասխանեմ. «Լրագրական աշխատութիւնը լաւագոյն բանն է զոր կրնամ ընել»։

Ու ա'լ աւելի սաքնալով խօսակցութիւնը, խաւացի գրադիտութիւն կ'ըսէ.


— Հաւատացէ՛ք, paradoxe մը չէ՛ աս, այլ անկեղծ համոզումի մը արտայայտութիւնը: Լրագրութիւնը գրադէտին համար հիանալի մարդարան մըն է: Անոր կը սորվեցնէ պայծառութիւն, յստակութիւն, խօսքը համայնքին ուղղելու և զայն համոզելու արուեստը: Օրագրողը կը խօսի լսելի ըլլալու համար: Անիկա խոյս կու տայ միթիւն բառերէ, պա'րզ բառերը կը վնասէ, ճշգորէն կ'ըսէ ինչ որ ըսել կ'ուզէ ու կը սորվի միայն ճշմարտը ըսել: Եթէ անձնական կարծիքներ ունի, կը տարածէ զանոնք, փորձով կը զգայ ուրախութիւնը՝ անոնց իր ջանքին տակ բողբոջելուն, ու կը հետևի անոնց արդիւնքներուն...: Այս կերպով, օրագրողը յառաջընթաց մըն է: Ասկէ աւելի գեղեցիկ դեր մը կա՞յ մտաւորական աշխարհին մէջ...:

Տիկին Սէսառլի բոլոր դործերը քաղուած են ժողովրդական տեսարաններէ: Իր հրաշակերտը նոյնիսկ, Ամենաբերեւելիին մէջ, ժողովրդական տեսարաններու շարքէ մը կը բաղկանայ, յոյզով, կեանքով ոգեւորուած, տենդադին, որոնք գլխու պտոյտ կը պատճառեն: Ամբողջ քաղաք մը պարունակուած է հոն, ու ինչ քաղաք: Սմէնէն աւելի հոն կը ցնցուի նարոյին՝ իր խաղամուտիտեանը համար: Երբե'ք, հաւատացէ՛ք, Տիկին Սէսառլի պիտի չկրնար արտադրել այս հրաշալիքը, եթէ օրագրող մը չըլլար ինք. այսինքն, եթէ սորված չըլլար տեսնել իրերը յստակ ու արագ նայուածքով մը ու զանոնք՝ հրատուր՝ թուղթին յանձնել, որով իրեն հետ մենք ալ կը հաւոզուինք թէ, օրագրութիւնը, եթէ պէտք եղած կերպով ըմբռնուի, վիպասանին համար ամէնէն օգտակար դպրոցն է:

Ա.ՆԱԲԷԼԼԱ

Մեր աշխատակից Յովհ. Գաղանձեանէ ստացած ենք պատասխան մը՝ Զիֆթէ-Սարաֆի ծանօթ հարցումին, զոր պիտի հրատարակենք յաջորդ թիւով: «Հայ կնոջ սեռային բարոյականը» խորագրին տակ՝ ամբօրի ու սոսնձասիրութիւն մըն է այդ յօդուածը. աւելորդ է ըսել նորօրէն ու գիտակցօրէն գործուած որ հետաքրքրութեամբ պիտի կարդայուի:

ՍԵՐՈՅ ՈՐՁԵՆ



Ուղի մ'ունիմ ես նըբանոյ,
— Սիրոյս ուղին մեղախաւէս, —
Որո՞ն նրմայն երջանկալուէ՝
Կ'ոգեւորէ զիս առ յաւէս:

Քընօյս հիւքեր կը փրքօին հոն,
Ու հաւսնուկներ հըրահոսան.
Հոն կը հիւսեմ երգ ու գեղօն,
Ես, սիրավառ, խանդո՞ճ գուսան:


Իսկ երբ օր մը խրին աչէս
Իմ պաշտելի ուղիս՝ անհե՛ս,
Մուք գիշերներն՝ ու ոսկեղէս
Զըցոյայ ա'լ արեւն յաւէս,

Նորէն զըսեմ պիտի ես յար
Սիրոյս ճամբան, մի՛՛ս անմուր.
Բաւ է անոր ես անդադար
Հըրայրն ունիմ, պաշտւմ բոլոր:
Մ. Կ. ՄԵՏԱՍՈՒՐԵԱՆ

ԸՆԿԵՐԱՅԻՆ ՆԻԻԹԵՐ

ԹԱԵԿԻՆԱԿԻ ՄԸ ՀԱՄԱՐ

(ԻՐԱԿԱՆ ՊԱՏՄԱՌԹԻՒՆ)



Բամբասանքը՝ ծնած սգիտութեան թուհալից ախտաներէն և անած դատարկակեցութեան մեղի ստինքներով՝ որքան տխուր տուամներու առիթ եղած է արդեօք իր դոյութեան օրերէն ի վեր: Բամբասանքին կուտքն ալ՝ Բաղդադի պէս՝ ալէն կեդրոններու մէջ միւսնոյն չափով ու միւսնոյ՝ աստիճանով չպաշտուիր: Տեղեր կան, ուր աւելի քեթերկրպագուներ ունի ան: Կիներու շատ սիրական այս դերը մեր դաւառակին մէջ աւելի եւանդով կը խնկարկուի, որովհետեւ հոս՝ բայ ի ընտանեկան թեթեւ դո՛ճերէ՝ ուրիշ դժադու մշտնի Նւայի մեր թոռնուհիները եւ այս իսկ պատճառով աւելի գլխ

րութեամբ կրնան հաւաքուիլ և բոլորիլ ա-
նոր բազմին շուրջը: Ասկէ զատ, որովհետեւ
իրենց մտաւոր վիճակը չներեր հետաքրքրուիլ
բարոյական և ուսումնական հարցերով, խո-
սակցութեան նիւթ կ'ընտրեն միշտ այս կամ
այն անձը, և կամ ընտա' իքը: Կը բաւէ որ
ընտանիքի մը—իրաւացի կամ անիրաւ, իրո-
ղութիւն կամ ո'չ—մէկ զաղանիքը լսէ ուրիշ
մը, ա'լ կայծալի արագութեամբ պէտք է
ծաւալի ամէն կողմ: Խորհրդապահութիւն
ըստած մեծ բարոյականը բնաւ դոյութիւն
չունի այս բամբաստանէր էտիներուն համար:
Համբերութիւն, դատողութիւն չկայ, իրողու-
թիւն մը իր պարագաներով քննելու, հաս-
կընալու պէտք չկայ: Որո՞ւ փոյթ թէ լսուա-
ծը սուտ է թէ ճշմարիտ, մ'կ—երկու բե-
րաններէ անցնելէ ետքը, լուրին ալիքները
կ'ուռն կը խոշորան, և կը տեսնես որ
թեթեւ դեմքեր մը իր ընթացքի մէջ տա-
կաւ հասանքներ ընդունելով՝ մ'ըրիկ մը դար-
ձած է: Իրողութիւնը խեղաթիւրուած, դի-
մակաւորած, ժպտած է, բերնի լորձունքներէ
իր վրայ խաւեր կազմելով հետզհետէ, ու
այդ բամբաստանքի ենթակառն ինքն ալ կը
չուարի, առանց կարենալու թուով կանգնել
այն յորդանոն հեղեղ՝ երուն դէմ դրսւ—կա-
թիլ մը ջուրի չափ պղտիկ՝ սխալանք պա-
րունակող—իր մէկ ընթացքը կազմած է իր
չուրջը, ու չգիտեր ի՞նչ ընէ, որո՞ւ հասկցնէ
իրողութիւնը կամ ճշմարտութիւնը: Բա՛բա-
սանքը՝ բարոյական այս անտեսանելի հար-
ուածը՝ յաճախ պատճառ եղած է սակայն չտո-
օճակներ մարելու. մանաւանդ այն տեղեր,
ուրիշ մտքի ու սրտի կրթութիւնը քիչ մը
աւելի հաստատուն քայլերով չէ անցեր իդա-
կան սեռի մէջէն, և նախապաշարունակ ու
անգործութիւնը, երկու առեւելի չարիքներ,
իրենց հիմը դրած են հոն:

Բամբասանքի զոհերուն վրայ հատ մըն ալ
աւելցաւ հոս վերջերս, երբ Զատիկն ու գա-
րունը՝ վերկենդանութեան գեղեցիկ եղանակը՝
իրենց գունաղէկ պատկեր՝ երով՝ կեանքի ու
հրճուանքի կը հրաւիրէին բոլոր շնչաւոր է-
ակները:

Աննա անուշով մանկամարդ այրի կին մը՝

զրկուած ապրուստի ամէն միջոցներէն, մու-
րալու ծանր հարկէն աղատելու համար՝ սփայ-
ուած էր ունեւորի մը տան մէջ ազականական
գործեր ստանձնել: Բաւական տարիներ կը
ծառայէ հաւատարմութեամբ ու պարկեշտու-
թեամբ: Օր մը, այդ տունէն թաշկինակ մը կը
կորսուի, ու դողը չգտնուելուն պատճառով՝
Աննային կը վերագրուի յանցանքը. խնդիրը
կը տարածայնուի, ու չարաշուք բերաններ
կը սկսին ծամծմել դժբաղդ կնոջ անունը,
բամբասանքին թելը կ'երկարի քաղաքին մէկ
ծայրէն միւսը, և հէ՛ք այրին լսելով իր ան-
ուան շուրջը կուտակուած զրպարտութիւնը,
ի դո՛ւր կը զայրանայ, կուլայ, երգումներ
կ'ընէ: Ամէն միջոց ապարդիւն: Չարաշուք
բամբասանքը՝ հետզհետէ աւելի ստուարանա-
լով՝ արձագանդի հաւատարմութեամբ՝ չըջա-
նաբար կը դառնայ, կը հասնի իր ականջը.
խնդրոյ նիւթ թաշկինակին ծայրը անբարոյու-
թեան ուրիշ աղտեր ծրարած: Դժբաղդ կինը՝
իր պատիւը աղարտուած տեսնելով՝ ա'լ չկըր-
նար հանդարտիլ, ջգային դեբաղդութիւնը
կը հասնի իր վերջին անտիճանին, հիւղակին
մուրթ անկիւնին մէջ կը փրփրի, կը կատգլի,
հանրային բանբասանքէն աղատելու միջոցներ
կ'որոնէ: Ամէնքն ալ ոչի'նչ սակայն: Յուսա-
հատութիւնը մութ ստուերներ կը տարածէ
խեղճին սրտին վրայ, արդարացումի հարքին
չգոյութիւնը ա'լ գգուելի կ'ընէ իրեն կեան-
քը, ու կ'որոշէ անձնասպան ըլլալ:

Ու կը գործադրէ աղետալի այդ որոշումը
սեւ գիշեր մը, երբ իր անչափահաս տղաքն ու
ծերուկ մայրը կը քնանային սովորական հան-
դարսութեամբ, անդէս՝ իսպառ այն ալեկո-
ծութեան, որ մահուն փրփուրները կը ժայթ-
քեցնէր թշուառ Աննային ամբողջ էութեանը
մէջ: Ամէն ոք թմրութեան ու գիշերային
անշարժութեան մէջ էր, միայն բամբասանքի
ճիւղը իր սուր մաղիկներով կը ճանկոտէր
տարաբաղդ մանկամարդին աչքերը: Վերջա-
պէս Աննա ծայրայեղօրէն յուզուած՝ տեսնե-
լով իր շուրջը կատարեալ լուրթիւնն ու ան-
շարժութիւնը իրեններուն, կ'ուլէ անկողնէն
ու ինքնահնար կախաղանի զրկին մէջ կը
թափէ իր արցունքներն ու... վերջի շո՛ւնչն
ալ: Իր կեանքին այսպէս մարելէն վերջն ա

դեռ կը մրմուռար բամբասանքին հրէշը, ու մարդկային անիրաւ գաւառներ զեռնէին ուղեր յարգել զէթ վերջին վայրկեանն անոր որուն աղէտին պատճառ եղած էին: Հաղիւ երկու մարդիկ կը հաճին անձնասպանին մարմինը նետել ու փակել փոսի մը մէջ, որուն խոտադատ մարդկութիւնը պիտի խնայէ անշուշտ դերեզման անուշը տալ, և տեսնենք թէ ի՞նչ նոր բառ պիտի հնարեն անոր՝ մեր Բալուի տկար սեռին «բարի ծաղիկներ»ը: Երբ ճակատագրապէս արդէն դժբաղդ կնոջ մը կեանքին էջերը կը փակուին այսպիսի եղերական վախճանով մը, ինչպէ՞ս պիտի կրնան իրենց խիղճն արդարացնել անոնք, որ առիթ եղան այդ թշուառուհին մղելու յուսահատութեան և անձնասպանութեան, և մեր հոգեւորականութիւնն ալ՝ երբ հասու ըլլալով հանդերձ իրողութեան՝ թաղման կարգ ու արարողութիւն չի կատարեր, ձայնակից կամ համաժողով եղած չըլլա՞ր բամբասանքներու արձագանգին: Եւ ինչո՞ւ հանդիսաւոր կերպով չյուզարկաւորել կեանք մը, որ իր անձը կը զոհէ պատուոյ զգացումին: Արդեօք մեր Եկեղեցին՝ որ անձնասպաններու վրայ կարգ կատարելը կ'արգելէ, բնաւ բացառութիւն մը չունի: Բարոյապէս նուա՞ղ անձնասպան համարելի են անոնք որ մոլութիւններու մէջ իրենց կեանքը կը քայքայեն աստիճանաբար, և սակայն ինչո՞ւ մեր եկեղեցականները անոնց դադաղին չեն զլանար թաղման արարողութիւնները, ու պերճաբար բառ դամբանականներով ալ յաճախ ներդրած չեն այդպիսի աներեւութապէս անձնասպաններու կեանքը, մոլութիւններուն հագցնելով առաքինութեան դիմակը:

Բալու

Յ. Պ. ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

ԺԱՄԱՆՑԻ ԲԱԺԻՆԸ

Այս օրերս, Բարիդի մէջ հրատարակուած երկու վիպասանութեանց առթիւ, խնդիր եղաւ թէ չինձո՞ւ, մտայնօ՞րն էին անոնց նիւթերը՝ թէ իրական: Յոյց տալու համար թէ իրական դէպքերը աւելի՞ տխուր ու խորագ-

դեցիկ են, հոս մէկ քա՛նի մանր պատմութիւններ պիտի պատմեմ, որոնք պուլվառնեւորուն վրայ, դրագէտներուն բերնի ծամոց եղած մանրամասնութիւն են, իրական դէպքեր:

Տղուն մէկը, օր մը, իրենց տունը յաճախող աղջիկներէն մէկուն կը սիրահարուի: Օրիորդը չա՛տ աշխատած էր խուսափելու համար անոր գգուանքներէն ու համբոյրներէն, բայց չէր յաջողած. հրասլուրուած էր անգամ մը:

Օրեր ամիսներ իրարու կը յաջորդեն ու սէրը իր արշաւը կը սկսի: Չերկարեմ, օրին մէկը աղջիկ մը կը ծնի... այդ օրիորդին:

Մայրը, որ տիկնութեան իրաւունք տակաւին չէր ստացած քաղաքապետարանէն, ջանաց իր զուակին սրտին մէջ բարութեան ու առաքինութեան սերմերը ցանել, ետքէն քաղելու համար ապահովաբար:

Տասներկու տարի կ'անցնի այդ դէպքին վրայէն. պարոնը սէրէ սէր, կին՝ է կին թուշտած է, թիթեռնիկի պէս: Ու այս անգամ, հակառակ իր քառուսն տարիներուն, չառաճի խարտիչուհի մը կը սիրահարի խնթի պէս: Այս վերջինը, վառվռուն ու սատանա յատիտ աղջիկ մը, կ'առաջարկէ պարոնին որպէս զի անգամ մը իր մօրը ներկայանայ: Մարդը կը հաւանի եւ աղջկան մօրը կը դիմէ. ինչ տեսնէ աղէկ, այն կինը որուն աղջիկը կուղէր խնդրել, իր առջի սիրուհին էր և աղջիկը՝ իր իսկ դաւակը:

Հոս չի վերջանար սակայն պատմութիւնը որ հետզհետէ անհաւատալի, սարսափելի բան մը կը դառնայ: Աղջիկը որ չի ճանչնար իր հայրը, կը սխդէ միշտ. անոր կինը ըլլալու, մինչդեռ հրէշ հայրը, վայրժեան մը չուլելով միաքէն անցունել իրերուն կացութիւնը:

Աղջկան մայրը, որ ինչպէս ըսի, ամուսնանալ ուղող պարոնին առջի տարփուհին էր, կ'ընդդիմանայ, և այս վերջին հրէշութեան ալ չի կրնալով տոկալ՝ խնդիրը դատարանի յանձնած է:

Ճիշդ չէ՞ ուրեմն թէ «Իրականութիւնը վիպասանութեանց լաւագոյնն է»:

Ուրիշ մանրամասնութիւն մը:

Երսուներեօթը տարի առաջ, ամերիկուհի մը իր էրկանը դէմ ամուսնալուծման դատ բանալով բաժնուեցաւ անկէ: Եւ որովհետեւ մինակ էր այս աշխարհիս մէջ, իր սիրոյն հետ առանձին, կրկին ամուսնացաւ, այս անգամ ալ բախտը ձեռքէն խլեց իր ամուսինը. մարդը պզտիկ հիւանդութեան մը հետեւանքով մեռաւ, մէկ քանի օրուան մէջ:

Արդ, վերջերս, այդ կինը սաղօնի մը մէջ, առանց ճանչնալու. իր տղի ամուսինին հանդիպելով, զայն շատ սիրուն ու համակրելի դատւ. այնպէս որ յաջորդ օրն իսկ գնաց... անոր ձեռքը խնդրելու:

Թէն, այդ մեծ դրագէտը, ֆէմինիստ չէր. անոր համար է որ, կարծեմ, կիները չեն սիրեր զայն. բայց ասիկա ոչինչ կը պակսեցնէ արուեստի այդ հրաշալի քննադատին փառքէն: Քանի մը խորհրդածութիւններ բաւական են ըսածս ապացուցանելու համար, թէ կնահածոյ եղած չէ երբեք Թէն, իր կեանքին մէջ:

«Տուէ՛ք կնոջ մը տ ամարանութիւն. գաղափար, սրամտութիւն, պզտիկ տղու մը ձեռքին մէջ հատու գործիք մը դրած պիտի ըլլաք:

«Բարիդի մէջ պարկեշտ մարդը օրը տանն անգամ կը ստէ, պարկեշտ կինը՝ քսան անգամ, աշխարհիկ մարդը՝ հարիւր անգամ, բայց ո՛չ ոք կրցած է հաշուել թէ աշխարհիկ կին մը օրը քանի՞ անգամ կը ստէ»:

X.

ՌՈՊԷՐԴ ՔՈԼԷՃ

Վարժարանիս յառաջիկայ տարեշրջանը պիտի սկսի Սեպտ. 2/15: Կարգադրութիւններ եղած են նոր գիւրութիւններ ապու վաճառականական ուսմանց համար: Մնացուն բոլիկ մը՝ աշակերտներու. առողջութեան, մարմնամարզներուն ու խաղերուն, ինչպէս նաեւ վարժարանին ընդհանուր առողջապահական վիճակին վրայ կը հակէ: Նախորդ տարու ընէ սկսեալ՝ բացուած է նաեւ փոքր աւոյ յատկացեալ նոր շէնքը, ուր կ'ընդունուին մինչեւ տասը տարեկան աշակերտներ:

ԽՄԱՌԱԳՐԱԿԱՆ ՆՕՐԵՐ

—o—

Ս. Յակոբայ արհեստանոցը լուադոյն վիճակի մը վերածելու մօտ օգտակար թելադրութիւններ ըրած էր վերջերս Երուանդ Էֆ. Չալուչեան, չափադիտութեան ուսուցիչ Արհեստից Կայս. Վարժարանին, Մասիսի մէջ իր հրատարակած մէկ յօդուածով: Թէեւ Որբանոցին իննամակալութիւնը ուղղակի Մասիսի միջոցաւ չի պատասխանեց յարգելի յօդուածադրին առաջարկին, որ էր՝ յիշեալ պետական վարժարանին մասնագէտ-ուսուցիչ Պ. Լէոն Ֆօսը հրաւիրել Գաղլը-Չէչմէ՝ Արհեստանոցը այցելելու և զայն աւելի՛ նշաւատկայարմար վիճակի մը մէջ դնելու. համար անոր կարծիքները իմանալու, բայց կը լսենք թէ Չալուչեան Էֆ. ի յօդուածը անհետեւանք չէ մնացեր: Գատըգիւղցի ծանօթ երիտասարդ մը՝ Որբանոցի իննամակալութեան անդամներուն կողմէ ներկայանալով թէ՛ իրեն և թէ՛ Պ. Ֆօսի, արհեստական ճիւղին զարգացման վերաբերող ծրագիր մը խնդրել է որ սիրա-յօծար պատրաստուել և յանձնուել է: Կը յուսանք որ այս առաջին ձեռնարկը նոր քայլ մը կ'ըլլայ Հիւանդանոցի Որբանոց-Արհեստարանը նոր ուղղութեան մը մէջ դնելու:

Գաւառային առաջնորդութեանց վերաբերեալ կարգ մը կարեւոր որոշումներ տուաւ իննս ժողովը իր վերջին նիստին մէջ: Հաստատեց Տ. Խոսրով Վրդ. Պէտրիկեանի ընտրութիւնը՝ իրեն առաջնորդ Խարբերդի, անոր տեղ Մուշի Պատր. Փոխանորդ Կարգելով Տ. Գնէլ Վրդ. Եւ Իսկ Տ. Գէորդ Վրդ. Իրբանոսեանը Բալու պիտի երթայ՝ տեղապահի պաշտօնով, մինչեւ որ առաջնորդական նոր ընտրութիւն կատարեն Բալուցիները: Պիլէճիկի առաջնորդ Տ. Մովսէս եպիսկ. Կէօմբիւքճեանը Իզմիր զրկել որոշեց, առաջնորդին հիւանդութեանը միջոցին անոր օգնականութիւնը վարելու համար, ինչպէս որ Տ. Մելքիսեդէկ Սրբազան ինք փափագ յայտնած էր: Մասն ժողովը որոշեց նաեւ եպիսկոպոսական վկայագիր տալ՝ Բաղէշի առաջնորդ Տ. Եզնիկ Վրդ. ին և Տիարաքէքիւրի առաջնորդ Տ. Եզնիկի վրդ. ին:

Պատրիարքական Փոխանորդ Սրբազանը
չորեքշաբթի օրը Ս. Պատրիարք Հօր կողմէ
ցաւակցական այցելութիւն տուաւ Պապական
նուիրակի փոխանորդ մոնսէնիօս Պօրկօմատէ-
րոյի, Լէոն ժ.Գ. Պապին մահուան առթիւ:

Ազգ. Հիւանդանոցի Տնօրէն Տօքթ. Շի-
րինեան էֆ. վերջնապէս հրաժարած ըլլալով,
Հոգաբարձութեան որոշմամբ՝ անոր յաջորդ
կարգուեցաւ Խօրայէլ էֆ. Հայկազն որ ատե-
նօք վարած է արգէն այդ պաշտօնը:

Մանկումէի էֆեֆաւ օրաթերթը, որ պատ-
կերադարձ հրատարակուելու արտօնութիւն
խնդրած և ստացած էր վերջերս Տպագրական
Տեսչութենէն, աւելի՛ շահեկան դարձած է
այդ առթիւ: Վերջին մէկ շաբթուան մէջ
հրատարակեց Երուսաղէմի ծանօթ միաբան-
ներէն Տ. Մամբրէ եպիսկոպոսի և Իզմիրի
առաջնորդ Տ. Մեղքիսեդէկ Սրբազանին պատ-
կերները, իբրեւ օրուան դէմքեր, շա՛տ նուրբ
ու յաջող պատրաստութեամբ, ինչ որ նոր
դարի մը կուտայ այդ ժողովրդական թերթին
ծաւալմանը: Անկեղծ հաճոյքով մըն է որ
կ'արձանագրենք մեր պաշտօնակցին օրըստ-
օրէական յաւաքդիմութիւնը, որուն համար
թերթին Տնօրէնութիւնը ո՛ր և է դո՛հողու-
թիւն չի խնայեր և Խմբագրութիւնը լաւա-
գոյն տարրերով կ'օժտուի հետզհետէ:

ԲԵՐԱՅԻ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԸ

Բերայի էսաեան վարժարանը իր ամա-
վերջի հանդէսը կատարեց շաբաթ օրը, նա-
խագահութեամբ Ս. Պատրիարքին որուն
չուրջը կը գտնուէին թաղին քարոզիչ Տ.
Հմայեակ եպիսկ., վարդապետներ, քահանա-
ներ, Թաղ. Խորհուրդը ամբողջութեամբ և
ծնողք: Դրիզօր էֆ. Մարգարեան կարգաց
Տնօրէնութեան վիճակացոյց-տեղեկագիրը որ
կը յայտնէր թէ երկուս վարժարաններու ընդ-
հանուր թիւն է 830 որոնց 470ը Էսաեան
վարժարան կը յաճախեն և մնացեալները բաժ-
նուած են Նարեկեան, Տօլապ-Տէրէի և Լու-
սաւորչեան դպրոցներուն մէջ: Մրցանակներու
բաշխումէն և ճառախօսութիւններէ ետքը,
Ս. Պատրիարքը տեսութիւն մը ըրաւ մայ-

րինի դատարարականութեան՝ պէտքին վրայ և
գոհունակութիւն յայտնելով Բերայի վարժա-
րաններու բարւոք վիճակին համար՝ շնորհա-
կալութիւն յայտնեց Թաղ. Խորհուրդին,
մասնաւորապէս անոր արժանաւոր ատենա-
պետին՝ Վսեմ. Միքայէլ էֆ. Մամիկոնեանի
որ յօժարած է վերստանձնել իր պաշտօնը: Ն.
Սրբազնութիւնը դրուատիքն ընելով Մամի-
կոնեան էֆ.ի և թուելով անոր մատուցած
անձնուէր ծառայութիւնները թաղային գոր-
ծերուն և վարժարաններուն, յայտարարեց թէ
«որչափ որ ինքը Պատրիարք է՝ չպիտի թողու
որ Մամիկոնեան էֆ.ն հրաժարի Բերայի Թաղ.
Խորհուրդի ատենապետութեան պաշտօնէն»:
Բուն ծախերով ողջունուեցան Ս. Պատրի-
արքին այս խօսքերը որոնք՝ հանդէսէն ետքն
ալ՝ յաջորդ օրը արձանագրուելով թերթերուն
մէջ, նոյն հաճելի տպաւորութիւնը թողուցին
Բերայի ամէն զատակարարի աղբայիններուն
վրայ, որոնց սէրը ու համարումը կը վայելէ
Մամիկոնեան էֆէնդին:

Հանդէսը օր բացուած էր Կայս. Համիտիյէ
քայլերգով, փակուեցաւ բարեմաղթութիւն-
ներով Վեհ. Կայսեր արեւշատութեան համար
որոնց ձայնակցեցան բոլոր ներկաները:

ՇՆՈՐՀԱՆԱԼԻԲ

Երկու անգամ արհեստական ակռայ շինել
տալով քանի մը տարիէ ի վեր կը գործա-
ծէի, բայց բոլորովին հանգիստ ըլլալու հա-
մար կը զգայի որ աւելի վարպետներու դի-
մելու պէտք ունէի. այս անգամ Ռոտոսթօ
այցելող վկայեալ ատամնարոյժ Խաչիկ էֆ.
Պալպալեանի (Մեղրունի) ցոյց առած յաջո-
ղութենէն քաջալերուած՝ իրեն դիմեցի ու
նոր ակռաներ շինել տալով հանգիստ եղայ:
Այսպէս նախորդներուն վրայ զգալի առա-
ւելութիւն տեսնելով՝ պարտք կը համարիմ
հրապարակաւ գոհունակութիւնս ու շնորհա-
կալութիւնս յայտնելու յիշեալ ատամնարոյժին՝
Խաչիկ էֆ. Պալպալեանի:

ՀԱՃԻ ՍԱՐԴԻՍ ԲՈՒՎԱՏԱԼԵԱՆ

1903 Յուլիս 7

Ռոստոք

Արսօնաք Կ. Ս. ԻԻԹԻԺԱՆ

Տպագրութիւն ԳՐԵԻՆԻՆՔ Օրագրի

ՏԱՐԵՐՔ ԲՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ

115 ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ

Բնագիտութեան սոյն դասագիրքը որ պատրաստուած է մասնաւորապէս Աղգային վարժարաններու մէջ դորձած ուսելու համար, յանձնարարելի է նաեւ առ հասարակ ամէն անոնց որ կը հետաքրքրուին բնութեան գաղտնիքներով:

Բնագիտական ամէնէն կնճռոտ հարցերը բացատրուած են պարզ եւ զիւրբ մտնելի ոճով մը որ արդիւնք է բազմահմուտ հեղինակին երկար տարիներու փորձառութեան իբրեւ ուսուցիչ բնական գիտութեանց Կեդրոնական Թուրքիոյ Գօլէճին մէջ:

Դասերը պարզուած են 115 պատկերներով որք աւելի յանկուցիչ կ'ընեն աշակերտին ուսած նիւթերը:

Գինն է միայն 8 դր. 780 երես եւ զօրաւոր կազմով

Կեդրոնաւեդիկն է Յ. ՄԱՏԹԻՆՍԵԱՆ Թղթալիաճառանոցը

Թիւ 27, Ֆինկաճնըլար եօզուու, Կ. Պոլիս

Կը գտնուի նաեւ բոլոր գրավաճառաց քով:

ՏԱՐԵՐՔ ԲՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ՕՍՄԱՆԵԱՆ ՇԱՐԱՐԱԳՈՐԾ ԲԵՐԱՅԻ

Սոյն հանրածանօթ չաքարավաճառը՝ Բերայի չիտակ ճամբան, թիւ 54, իր խանութը ընդարձակած ու ճոխացուցած է, թէ՛ իբրեւ բաքիսըռի եւ թէ՛ իբրեւ չաքարավաճառ, աւելի գոհ ձգելու համար իր բազմաթիւ յաճախորդները: Ամբան եղանակին մէջ, համեղ պաղպաղակներու պէսպիսութիւն մը կայ ցորեկ եւ գիշեր:

ՀԱՃԻ ՍԱՐԻՄ Օսմ. չաքարագործը ճոխ մթերք մը ունի հարսանեկան չաքարեղէններու, ընտիր տեսակէ, ու մասնաւորապէս յանձն կ'առնէ հարսանեկան հանդէսներու առթիւ ո՛չ միայն անոնց հայթայթումը՝ այլ նաեւ մատուցումը եւ սպասարկութիւնը տուաներու մէջ:

Միակ մասնաճիւղ, Ղալաթիա, Թօփճըլար Ճատտէսի, Թ. 101:

5-30

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱՐԴԸ ԵՒ ԻՐ ՅԵՂԸ, հեղ. ԲՐԹՖ. Ա. Ալաբէխք, Թարգմ. Մ. Կ. Նազիկեան ԷՖ. Սեռային առողջարանութեան կարեւորագոյն գիտելիքներուն վրայ խօսող սոյն ժողովրդական գիրքը երկրորդ տպագրութեամբ լոյս տեսաւ Ը. Մատթէոսեան տպարանէն: Գին 5 ղր: Վաճառման կեդրոնատեղի՝ Կալենց գրատուն Կ. Պոլիս:

ԳՐՊԱՆԻ ԲԱՌԱՐԱՆ անգլիէրէնէ հայերէն, որ կը լրացնէ կարեւոր պէտք մը ուսանողներու, ճամբորդներու եւ առեւտրական գործով զբաղողներու համար: Գին 8 ղր: Կը գտնուի բոլոր գրավաճառներուն քով: Կեդրոնատեղի Սաքաեան տպարան, Կալաթա:

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆՍՑ ԱՊՍՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՋ 1828-1829

Հ Ի Դ Ե Հ Ի Ք Ի Ի Ղ

Մինչև 1899ի վերջը հատուցեալ շնորհք	240,000,000	Փր.
1899ին գանձուած ապահովագրին	19,500,000	»
Դրամագլուխ եւ պահեստ	105,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	18,000,000,000	»

Կ Ե Ն Ս Ց Ք Ի Ի Ղ

Մինչև 1889ի վերջը հատուցեալ շնորհք	99,000,000	Փր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	253,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	150,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Լուցիոն»ի ապահովագրեցող կ'ընծայէ հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ՉԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մանաւոր սակացոյց՝ գեղջեայ զինքնով: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերադանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները: Ծանարածիներու տարուէ տարի անմիջական վճարում, որով Լուցիոնի ապահովագրողք Ձերժ էն այն վնասներէն եւ յուսախաբութիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ ծանարածիներու բարդման (accumulation des bénéfices) ՅՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դուրսեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագորուին:

Ընկերութեան դրամասունքն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԲԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Պոլիս, Սուլթան Համամ, Բասաթ Քաթրնը Օղլու

Մամահալ՝ Ղալաթիա, Ինայէթ Խան, գործակալ Միհրան Էֆ. Դաւիթեան:

Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ



ՅՈՎԱԽԷՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ

(ՄԵՆԴՐՈՒՆԻ)

ԱՍՏՄԱՆԱՐԱՅԻ

Մուգաֆէրիէ Հիւանդանոցին եւ

Պարսկական Վարժարանին

Բերա, Մեծ Փողոց, Թագսիմ, քիւ 61

Չըրանեան աբաղքման

Պալպալեան ամէն օր ակնայի ամէն տեւա՛յ հիւանդութիւններով տառապողները կ'ընդունի. իսկ Ուրբաթ, Կիրակի եւ Ներքշաբթի մինչեւ ժամը 5: Դիչերունն ու եւ է ժամուն կարելի է գրել: Պալպալեան կ'երաշխաւորէ իր լեղուցած ու չիւսած ակռաները: Յարեկները աղւալ քաշել տալու համար ուր Վալաճը մը չկայ. քաշել տալու ին կամքէն կարեալ է:

Ալեքանդրոս ԺԻ

‘AU TALON D’OR,,

Օ ԹԱԼՈՆ ՏՕՐ

ԲԱՐԻՋԵԱՆ ԿՕՇԻԿՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

Գ ԱՌԼՕ ԱԶՆԱՄԵԱՆ

ՀԱՅ ԿՕՇԿԱԿԱՐ

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉՍՓՈՒ ՎՐԱՅ

ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ

Դա եւ կաղերու համար պատրաստուած

Կալաքա, Վոյվոսա փողոց, քիւ 103

Ճաշակաւոր ու վերջին նորաձեւութեան համաձայն կօշիկներու յանձնարարութեան համար, — մանաւանդ չափու վրայ շինուելիք, — կ'արժէ անգամ մը այցելել սոյն վաճառատունը:

Կ. Յ. ՏԵԻՐՄԵՆՃԵԱՆ

ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐ

ՍԱՄՍՈՆ

Կը ստանձնէ վաճառականական պիտոյից, սպագրական գործերու պատրաստութեան հոգը.

Գին ԴԻԻՐԱՄԱՏՉԵԼԻ

Մախուր եւ արագ գործօնեութիւն.

Արժէք կանխիկ. 5% ի գեղջ.

Ծանօթ վաճառականաց, ապառիկ.

Առաջին փորձը կը վստահեցնէ ձեզ ամէն մասամբ:

Մանրամասնութեանց համար դիմել

Կ. Յ. ՏԵԻՐՄԵՆՃԵԱՆ

ՍԱՄՍՈՆ

ՖԵՆԻԿՍ ԷՍԲԱՆԵՕԼ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.

Հրդեհի եւ Կեանքի ի ԲԱՐԻՁ


Դրամագլուխ՝ 63,228,000 Ֆրանք: Դրամա-

տուն ի Կ. Պոլիս՝ Բրէտի Լիճնէ

Դեր-Գործակալ Կ. Պոլսոյ Եիւլիէն.

ԲԱՌԼՈ ԱՀՆԱՄԵԱՆ

Կալարա, Վոլլասա փողոց Թիւ 103



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը սնննայ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է: Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

ՍԻՆԿԷՐ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատուոր եւ դիւրագործածելի ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ:

Ձեռի, ոտի ու ոտի եւ ձեռի միանգամայն միւլուկներ կը գտնուին:

Սինկերի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

ՇԱՐԼԱՔԱՆԿԱՆ
ՄԱՆԱՎՃԱՐՈՒԹԵԱՆ

ՌԵՐԱ

1. Մեծ փողոց, Պօն Մառչէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին.
2. Մեծ փողոց, Կալաթա Մէրայի Լիսին դէմ.

ԿՍԼԱԹԱ

1. Սինկեր խան, Թիւէլին ետեւ.
2. Գարաքէոյ, Թրամվէյին կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ

1. Սուլթան Համամ, Թ.
2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13.

ՍԿԻՐՏԱՐ

Չարը Պոյու, Թ. 120.

Դասերը եւ նորոգութիւնք ձրի.

Կատարեալ երաժշտութիւն:

Մասնանկեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւզօղլուի տունը:

ՖԵՆԻՔՍ ՕԹԻԵՅԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԴ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՂԱԳՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (Ի ՎԻԵՆՆԱ)

ՊԱՏՈՒԱԿԱԼ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ. ԴՈՒԲՍ ԼՈՒՐ ՏԵ ՊԱՎՐԻՌ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր. ԸՆԿ. ընդդեմ հրդեհի (Ի ՖԱՐՔԱԺԷՆ)

ԱԼԼԵԱՆՑԱ

Ծովային ապահովագր. ԸՆԿ. (Ի ՃԵՆՈՎԱ)

Սոյն ընկերութեանց Դրամատունն է Ի. Կ. Պոլիս, Փոքսի Լիօնե

Ընդհ. եւ լիազօր ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ. ՅԵՐԱՏԵԱՆ

Գրասենեակ, Պոլիս, Հանօթուլօ Խան, Թ. 52-53-54-55-56

ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԴՈՐՇԵՐ

Դաւթեան Դարձակալութիւնը որոշած ըլլալով նոր զարկ մը տալ հրատարակչական ճիւղին՝ հրաւէր կը կարգայ մեծօրոյ հեղինակներուն որպէս զի իրենց գրական երկերը փութան ներկայացնել Դորձակալութեան:

Հրատարակելի գիրքերուն ձեռագիրը եւ ընթ որինակ ըլլալու է՝ Մէարիֆի օրէնքով: Դորձակալութիւնը կը ստանձնէ գիրքերու վաճառքը, տպագրութեան, փորձերու սրբագրութեան կազմի, եւ այլ աշխատութիւնները:

Կը կատարէ նաեւ տպագրական ամէն տեսակ գործեր, այցետոմս, շրջաբերական, նամակազուլս, ազդեր, դպրոցական բաւենիչ, պատուանիչ, վիճակացոյց, վկայագիր, հաշուեգիր, եւ այլն եւ այլն:

Դիմել առ ՍՄԲԱՏ ԴԱԽԹԵԱՆ

Խօրատաննեան Խան, Սիւրհեհի, Կ. ՊՈԼԻՍ

5-5

ԴԱՇՆԱԿԻ ԴԱՍ

Դաշնակահար օրիորդ մը, որ խիստ լաւ մէթոս մը ունի՝ նորալարութեան մարզելու դաշնակահարութեան, կը փափագի այցելութեամբ դաս տալ առններու մէջ: Դիմել՝ Մասիսի խմբագրութեան:

HOTEL «FERAH»

ՕԹԷԼ «ՖԵՐԱՆ»

Բրինքիւրօ, Նիզամի պողոտային վրայ, ծովահայեաց, ընդարձակ պարտէզներու մէջ: Վարձակալը, Աւաքել Տերեհկեան որ այնքան խնամօք կը վարէ Պոլիս Սուլթան Համամի հանրաժանութիւնը նախկին Գասպար ճաշարանը, յանձն առած է նիւթական ամէն զոհողութիւններ ընել՝ իր բազմաթիւ յաճախորդներուն հանգստութեան համար:

Դիմելը չափաւոր, լաւ եւ մաքուր սնունդ, պանդոկը բաց է Եւրոպական մայիս մէկէն սկսեալ:

ՏՈՒԹ. Ե. ՄԱՍԻՍ (Բերա, Թագսիմ փողոց, ք. 15) Բացի սովորական ներքին հիւանդութիւններէ, կը դարմանէ մասնաւորաբար, նոր մեթոսներով եւ ինքամով, ստամոքսի, աղեաց, միզային ճամբաներու հիւանդութիւնները, ջղային տկարութիւնները, գաղղիական ախտերը (սիֆիլիս եւ այլն) եւ մորթի հիւանդութիւնները: Հիւանդ կ'ընդունի ամէն օր կէս օրէ վերջը: